

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՖՐԱՆՍԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր յունիս 15ի թիւին մէջ հրատարակուած Բարիզեան թղթակցութիւնը Հայոց մտքերը պիտի կազդուէ այն բարերար ազգեցութեամբ որով հիւանդի մը տագնապի օրերուն բժշկին լրջօրէն յուսադրական քաջալերանքները անոր ընտանիքը կը սրտապնդեն: Երբ լազը կը կարծէր թէ ժամանակը 95-96 թուականը պիտի առնէր և տանէր նեակը, խորասուզէր մոռացութեան մահաստանը, Թիմուրէնկեան յիշատակներուն քով. ու Եւրոպա նորանոր մտահոգութեանց ներքեւ ընկճուած, ա՛լ կարմիր թուականը յիշելու պատեհութիւն պիտի չգտնէր: Հաւանական է որ օսմանեան քաղաքագիտութիւնը իր հաշիւներուն մէջ սխալած պիտի չհամարուէր եթէ Հայ ժողովուրդը յուսահատութեան դիւրաւ անձնատուր ըլլալու չափ տկարանար. բայց, մենք ինչպէս նախորդ սերունդնիս կ'երգէր:

Դարերու յարցող ազգի գառակ ենք

Ուստի եւ անընկճելի կամքով մը որ իր ուժը հայ ցեղին բազմաբեղուն մաքէն կը ծծէ, առաջ կը վարենք ինքնապաշտպանութեան մեր բազմադարեան մարտընչումը:

Այդ բեղմնաւորութեան ծնունդն էր յունիս 16ի Բարիզեան գեղարուեստական բողոքարկութիւնը: Ֆրանսայի մեծ մտքերէն մին, շրջապատուելով Գեղարուեստին տիեզերահոյակ ներկայացուցիչներէն, ու հայ բանաստեղծի մը հոգիէն ներշնչուած, մեր հայրենիքին չարչարանքներուն համար մարդկութեան զգացած զայրոյթը սուլթան Համիտի երեսին անգամ մը ևս պոթովացուց, ճիշդ այն պահուն ուր տիեզերք ժամադիր եղած է քաղաքակրթութեան ոստանը: Երբ լազի քանասարները իրաւունք պիտի ունենան ճակատագրական պատուհաս մը համարիլ այն գուզադիպութիւնը որմէն իրենց երեսին ժայթքած նախատիները քանի մը նահանգի կորուստէն աւելի ծանր է, և իրենց ապագային համար չարագուշակ:

Հայոց համար ֆրանսական բարեացակամութիւնը

անցողական դիպուած մը չէ: Չորս տարի է ի վեր է որ հայկական դատին պաշտպանութիւնը օրէ օր աւելի բազմաթիւ զօրավիգներ կը գտնէ Ֆրանսայի մէջ: Ֆրանսացիները շուտ բռնիոզ ժողովուրդ մը կը կարծուին, մինչ անգլիացիները իրենց պաղարին հանդարտութիւնը երբեք չկորսնցնելու համար կը վայելն. հայկական խնդիրը սակայն տարբեր տեսարաններու հանդիսատես ըրաւ մեզի: Մեր աղէտներուն կայծակէն Անգլիացիները կրակ առին, բռնկեցան, իսկ Ֆրանսացիները հազիւ թէ զոյ մը զգացին. բայց ահա քաղաքագիտութեան ջրհանկիրները անգլիական սրտերու հրդեհը պաղ ջուրի ողորովին ներքեւ գրեթէ մարեցին, մինչ անդին կրակը օրէ օր աւելի կ'առնէ Ֆրանսան: Անգլիական մամուլը առ ժամապէս գրեթէ լուռ կը մնայ քաղաքական զօրեղ պահանջներու հարկին ներքեւ, իսկ ֆրանսական թերթերը միշտ արձարծուն կը պահեն հայկական կրակը: Ուստի անոնք որ կը կարծեն թէ Եւրոպան մեզի վերջնապէս լքած է. պէտք է նաև կարծեն թէ կրնան սխալած ալ ըլլալ, վասն զի Ֆրանսան մեզի չէ մոռցած:

Չափազանցօրէն լաւատես պիտի չհամարուինք եթէ մօտաւոր ապագայի մը մէջ Ֆրանսայի աշակցութիւնը մեր դատին համար ակնկալելու յոյսը տաճենք: Երբեք տարի է Բարիզ հայկական խնդիրը կը քննուի, կ'ուսումնասիրուի բազմադիմի տեսակետներով: Մեծագոյն հանգէտները սրպէսիք են Ռիվիէ տէ Տէօ Մօնտ, Ռիվիէ տը Բարի, ամենայուրջ եւ ծանրախոհ ընդարձակ յօդուածներով կը քննեն հայկական խնդիրն մէջ Պ. Հանթօնի քաղաքականութեան հետեանքները, որոնք ֆրանսական շահերուն աննպաստ կը համարին: Հեղինակաւոր հրապարակադիրներ ինչպէս են Գլէմանսօ, Գիյար, Կոիէ Թիւրքիոյ բռնապետին և թրքական վարչութեան դէմ խրոխտ յարձակումներով ֆրանսական զգացումը գրգռուած վիճակի մէջ կը պահեն: Մեծանուն պատմաբաններ ու գրագէտներ՝ Պոլիէօ, Մարիլէ, Վանտալ, Անագոլ Ֆրանսիան իրենց մեծ տաղանդին բոլոր ուժովը ուսումնասիրեցին Հայութիւնը և հայկական խնդիրը իմաստասիրական եւ քաղաքագիտական բարձր տեսակետներէ:

Ու գրական եւ գեղարուեստական հովանաւորութիւնը որ մեր վրայ կը տարածուի, եզական երևոյթ մընէ, Եւրոպական ուրիշ ոչ մէկ երկրի մէջ իր նմանը ունեցող:

Անգլիացիին մեզի լոկ իբր դժբաղդ արարածներ կը նկատէ, Պրանսացիին՝ հայ ցեղը կը գննէ իմաստասէրի եւ արուեստագէտի աչքերով: Լոնտոն՝ Աստուծոյ եւ Նարարարութեան դիմուկ կ'ընէ. Բարիզ՝ Պրանսայի եւ մարդկութեան:

Իւրաքանչիւր մեծ պետութեան 95-96ին հայկական խնդրին մէջ հետեւած քաղաքականութիւնը դառնութեամբ կամ գոհունակութեամբ քննելով ժամանակ անցընելու չենք հրաւիրեր հայ ազգը: Չբաղինք այդ անցեալովը որպէս զի չսխալելու որչափ հնար է մեծագոյն հաւանականութեամբ կարենանք գծել ուղղութիւնը: Պ. Հանթոնի քաղաքականութեան գնահատումը գերազանցօրէն կարևորութիւն ունի մեզի համար: Եւ ահա կը տեսնենք թէ մանրակրկիտ քննադատութիւն մը իր պարսաւանքի բուն կուտայ 1895-96ի արտաքին գործերու նախարարին ինչո՞ւ այդ պարսաւանքը. վասն զի Պ. Հանթոն Պրանսայի բարոյական և նիւթական շահերուն հակառակող ուղղութեան հետեւած է հայկական կոտորածներուն ատեն: Այս ճշմարտութիւնը հայ ազգին աչքերուն ո՛ր եւ է նշանակութիւն պիտի չունենար եթէ զայն մենք վեր հանած ըլլայինք. երբ քննադատական յանդիմանութիւնը Պրանսայի տաղանդաւոր քաղաքագէտներէն ու մեծ մտքի տէր խորհողներէն կը լսուի մենք հայերս կրնանք մեծապէս օգտուիլ արտայայտուած համոզումներէն:

Պ. Հանթոնի քաղաքականութիւնը ինչո՞ւ Պրանսայի շահերուն աննպաստ կը համարուի: Վասն զի անոր ձգտումը սուլթանին պաշտպանութիւնը եղաւ ի վնաս քրիստոնեաներուն: Բնական է ուրեմն յայտնուած ֆրանսական դժգոհութիւններէն հետեւցնել թէ Փրանսացիները քրիստոնէից նուիրուած աշակցութեան մէջ կը տեսնեն իրենց օգտակար քաղաքականութիւնը: Երեք տարի է մշտաւորական հանդարտութեան մէջ օրէ օր աւելի պայծառ ու ջինջ տեսութեամբ կը պարզուի այս ճշմարտութիւնը, ու մենք ալ հայ ազգին համար այս էջերուն մէջ արձագանգ կուտանք արևելեան խնդրին համար Պրանսայի գաղափարներուն:

Այս քաղաքական քննադատութիւնները, մեզի յայտնուած համակրական ցոյցերը, ու գանազան դէպքեր միանալով մեզի ներքին կ'ընեն սպասել որ երբ արևելեան խնդիրը վերաբացուի Պրանսա ուղղակի իր պաշտպանութեան ներքեւ պիտի առնէ քրիստոնեաներուն դատը:

Չենք կարծեր որ վերաբացումը ուշանայ: Կոտորածներու ատեն և անկէ ետքն ալ, քաղաքական անձնաւորութիւններ կարծիք յայտնեցին թէ չորս հինգ տարիէն Եւրոպայի կարելի պիտի ըլլայ Հայաստանի բարեկարգութեանց խնդրով լրջօրէն զբաղիլ: Այդ ժամանակամիջոցը լրանալու վրայ է, և ահա կը տեսնենք թէ միևնոյն ատեն Եւրոպայի խնդիրներուն օրակարգէն կը վերնան ծանրածանր հարցերը որոնք մեծ պետութիւնները մտազբաղ կը պահէին: Թրանսլալի խնդիրը 1895ին կը ծագէր, հայկական հարցին էն տագնապալից միջոցին, եւ վիլ-

հելմ կայսեր պաշտպանութիւնը վայելելով կը վրդովէր Անգլիան. քիչ մը եւս և ահա Հարաւային Աֆրիկէն ալ եւս ո՛ր և է վտանգ Անգլիոյ համար գոյութիւն չունի, Թրանսլալի սպասուած ջախջախումովը: Չինական խնդիրն ալ պայծեցաւ. պետութիւնները արդէն անոր լուծումին կը հետամտին, ու շատ շանցած Եւրոպոյն-Արեւելքի կողմը ամէն դժուարութիւն կը հարթուի, եթէ ոչ մշտնջենապէս բայց գոնէ երկարատեւ ժամանակամիջոցի մը համար: Ու Եւրոպա ալ եւս ուրիշ զբաղում մը չունի, ուստի եւ պիտի սկսի արեւելեան խնդրով վերստին պարապիլ: Ամերիկա արդէն սպառնական դիրք մը կը բռնէ Թիւրքիոյ նկատմամբ, Ռուսիա իր նախապատրաստութիւնները կը տեսնէ, Պրանսա անուղղակի ցոյց կ'ընէ սուլթանին դէմ իր հայասէր տրամադրութիւններովը, Անգլիա խորհրդաւոր լուծիւն կը պահէ, իսկ միւսները սուլթանին ո՛ր և է բարեկամական հակում ցոյց չեն իտար:

Պրանսա 1895-96ին Ռուսիոյ Արևելեան քաղաքականութեան պարզապէս հետեւող մը եղաւ, իր շահերը անոր շահերուն ստորադասելով. բայց ահա երկու տարի է իր ինքնավարութեան տէրը եղած է, ու երբ կրկին բացուի Արևելեան խնդիրը, անիկալ իր անցեալին հաւատարիմ մնալով առաջնակարգ դեր մը պիտի ստանձնէ Թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներուն վիճակին բարւոքման մարդասէր գործին մէջ: Այս յոյսովն է որ կուրախանանք տեսնելով Բարիզի մէջ Հայոց համար սիրոյ և համակրանքի ցոյցերը:

## ՀԱՅՈՒՆ ՈՒՂԵՂԸ

## ՀԱՅՈՒՆ ՅՈՌԵՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Բ.

Չպիտի ներքի ինքզինքիս Նոր Կեանքի սինակնեւրուն մէջ յոռետեսութեան վրայ ընդհանուր հայեացք մը պարզել եթէ համոզուած չըլլայի թէ սինակներով միայն կարելի է բացատրել հայուն թէ ինչ է յոռետեսութիւնը, եւ թէ ինչու պէտք չէ որ յոռետես ըլլանք:

Գտնուած են միշտ ճշմարիտ յոռետեսներ, յաւիտեանական գժգոհներ, սակայն անոնց թիւը այնքան փոքր եղած է որ մղուած չէ իրենց դէմ պայքարը. և սակայն, ատեն ատեն, բժիշկներ բարձրացուցած են, հոս ու հոն, ձայներնին, իմացնելով վտանգը:

Մենք, կ'ըսեմ, այդ ազդարարութեան շատ աւելի պէտք ունինք. արդէն ջղային ազգ մը, առիթներու կը սպասենք աւելի ևս յուզելու մեր ջիղերը ու յոգնեցնելու

մեր ուղեղը: Այդ ձևերը բարձրացնելու իրաւունքը ունեւնալու համար է որ օրինակներու պէտքը կը զգամ, ու մէջ կը բերեմ մէկ քանի մեծ յոռետեսներու կենսագրութիւնը:

Շօքէնհաուրէն առաջ, որ հայրն է դասական յոռետեսութեան, Լէօբարտի եղած է առաջին յոռետեսը: Արդի Իտալիոյ, Տանդէն յետոյ, այդ մեծ բանաստեղծը հիւանդ մը եղած է իր հասուն հասակին, ճշմարիտ ջղային մը, ու իր յոռետեսութիւնը իր տկարութեան արդիւնքն է եղած:

Իր ուշ տարեկան հասակին, կ'ըսէ Սէնտէր, յունարէն ուսանիլ փորձեց, առանց դասատուի, առանց առաջնորդի, հօրը գրադարանէն առնելով քերականութիւն մը միայն: Տասը տարեկան չեղած յունական գրականութիւնը ծանօթ էր իրեն: Տասնը վեց տարեկանին ամբողջ հին գրականութիւնը ու իր մայրենի լեզուէն զատ գիտէր Փրանսերէն, Սպաներէն, Գերմաներէն, Անգլիերէն եւ Եբրայեցերէն:

Սովորական դէպք մը չէ, խոստովանեցէք, տղու մը այսքան բան գիտնալը: Իր ութ տարեկան հասակէն Լէօբարտի կը յոգնեցնէ ուղեղը, սորվելով շատ մը բաներ զորս այսօր քսան տարեկան երիտասարդ մը հագիւ կըրնայ հասկնալ: Ու այսպէս շարունակաբար աշխատելով, մտաւորական կարողութիւնները պրկելով, ուշադրութիւնը, յիշողութիւնը անդադար մաշեցնելով, կը հասնի ջղային յոգնութեան մը որ յետոյ կ'արտայայտուի յոռետեսութեամբ: Խենդ մը չէ եղած Լէօբարտի այլ ջղային մը:

Ու զժբազդութիւնը ուղած է որ այս զարմանալի ուղեղը գտնուի շատ հիւանդ մարմնի մը մէջ: Կարելի է, հակառակ իր մտաւորական տարապայման յոգնութեան, Լէօբարտի ըլլար բանաստեղծ մը տխուր բայց ոչ յոռետես, եթէ ֆիզիզական ցաւեր ալ չը գային աւելցնել իր տխրութիւնը: «Լէօբարտիի հիւանդութիւնը մէկ հատ մը չէր. ոսկորի կակղութիւն մը ու ձեւափոխութիւն մը, կուրծքին մէջի գործարաններուն կանոնաւոր գործունէութիւնը կը խանգարէր. մարսողութիւնը ու արեան շրջանը շատ գէշ կը կատարուէին. շունչը զժուարաւ կ'առնէր:» Այս ցաւերը անոր երիտասարդութեանը կը հանդիպէին: Իր կեանքին առաջին մասին մէջ յոռետես մը չէ եղած. երգած է նախ քրիստոնէութիւնը ու յետոյ ազգային նուազներ գրած է: Բայց ֆիզիզական ցաւերը, մտաւորական յոգնութիւնները որոնք առողջի մը քով կարելի է չարատարէին յոռետեսութիւնը, մղած են Լէօբարտին ուրանալ աւելն բան, ուրանալ կեանքը, ուրանալ յոյսը:

Կը խոստովանի թէ կեանքը տխուր ու յուսահատ տեսնել սկսած է ֆիզիզական ու բարոյական ցաւերէ յետոյ: «Կը յուսայի թէ, կ'ըսէ, սիրելի ուսումնասիրութիւններս պիտի պաշտպանէին զիս ծերութեանս մէջ, ու կը կարծէի որ, բոլոր հաճոյքներուն կորուստէն, տղայութեան ու երիտասարդութեան առաւելութիւններէն յետոյ, կը յուսայի թէ, ոչ մէկ զօրութիւն, ոչ մէկ զժբազդութիւն կրնայ ինձմէ հեռացնել աշխատելու կարողութիւնս. բայց

քսան տարեկան էի երբ այս ջղային ու ներքին գործարաններու հիւանդութիւնը ունեցայ, որոնք զիս կ'անջատեն կեանքէն եւ ոչ իսկ մահուան յոյսը կուտան, կը հեռացնեն ինձմէ այն մէկ հատիկ ու սիրելի հարստութիւնս, աշխատութիւնը: Անկից ի վեր, ու զխաւորաբար երկու տարիէ ի վեր ալ չեմ յուտար որ կարենամ աշխատիլ...: Ալ զժգոհալ չեմ գիտեր, զժբազդութեանս մեծութեանը վրայ ունեցած գիտակցութիւնս խօսքով չի բացատրուիր: Ամէն ինչ կորսնցուցի, կոճղ մըն եմ որ կը զգայ ու կը տանջուի:»

Այս սողերը գրելէն տարի մը յետոյ, բոլորովին յուսահատած, անձնասպանութեան վրայ կը խօսի: «Եթէ չկրնամ Ֆլօրանս մնալ, ու եթէ չկրնամ առնակաւ ու էն խոռեմ միջոցին դիմել Ռեզանդի պիտի վերադառնամ:» Առնական ու խոհեմ միջոցը՝ անձնասպանութիւնն է:

Այսպէս մէկ կողմէն ուղեղի չափազանց յոգնութիւնը, միւս կողմէ ջղային հիւանդութեանը, ներքին գործարաններու անկանոն գործունէութիւնը միացած կ'տրտաղբն ջղային այն տխրութիւնը որ գաղափարներու սեւութեամբ, մտածումներու միօրինակութեամբ կարտայայտուի: Իր բանաստեղծութիւնը տխրանուագ ու մեյամաղձիկ, շատ գեղեցիկ է, իր յոռետես վայրկեաններուն այնքան հաստատամտութեամբ ու համոզումով կը նկարագրէ մարդկային ցաւերը, ամէն բան իր հիւանդ ակնոցներուն ետեւէն տեսնելով, ամենուն քով գտնելով դժբազդութիւն ու յոգնութիւն, որ արդէն պատրաստուած միտքեր, արդէն տխուր հոգիներ շուտով պիտի սքանչանան անոր համոզումներուն զօրութեանը վրայ և ընդունին գաղափարները:

Ճշմարիտ ու դասական յոռետեսը չեղաւ սակայն Լէօբարտի. իր բանաստեղծութիւնները կեանքին տխրութիւնը միայն կը տեսնեն, մահուան աղուտրութիւնը ու ամէն բանի յաւիտենական ունայնութիւնը, առանց փիլիսոփայական նկատողութեանց: Լէօբարտի յոռետեսութեան բանաստեղծն էր, աւելի քան հաւատացեալ յոռետես մը: Իր գործերուն մէջ հոգին միայն կը զգայ, ցաւերու ու կսկիծներու տակ, ուր բանականութիւնը գործ չունի:

Շօքէնհաուր ջղագար ընտանիքի մը զաւակն էր: Մեծ մայրը, պզտիկ հասակէն ապուշ, երկու զաւակ ունեցած է. մէկը՝ Շօքէնհաուրի հայրը, միւսը՝ հօրեղբայրը: Այս վերջինը ապուշ ծնած ու ցնգած մեռած է: Հայրը ուսեալ, գործունեայ, յստակ գաղափարներու տէր անձ մը: շատ բարկացող, խիստ ու մալլ ջղային մարդու մը նունը հանած էր: Կը պատմեն թէ իր ծերութեան ատենը գրեթէ խենդեցած ու անձնասպան է եղած:

Այս տարաբազզ ու խելագար ընտանիքը ունէր ուրեմն ախտաբանական պահանջուած բոլոր պայմանները խենդերու ծնունդ տալու: Ու Շօքէնհաուր եղած է այդ ընտանիքին զաւակը:

Առանձնութիւնը սիրած ու հանդարտութեան մէջ ապրած, չէ կրցած նայն իսկ մօրը հետ ապրիլ: Ոչ միայն

մարդոցմէ կը հեռանար, այլ կիներէն ալ որոնցմէ դրեթէ կը բանէր:

Երեսունը մէկ տարեկան հասակին կը հրատարակէ փիլիսոփայական գործ մը, որուն վրայ շատ մեծ յոյսեր դրած էր: Ոչ ոք ուշադրութեան կ'անէ այդ աշխատութիւնը, թերթերը անով չեն զբաղիր: Եօթնհասարակ պէս անհասարակ մարդու մը համար այս բաւական էր մարգոցմէ ու կեանքէն զզուելու համար: Այս առաջին անյաջողութիւնը անոր ապագայ յոռետեսութեան վրայ ահագին ազդեցութիւն ունեցաւ: Պերլինի մէջ, համալսարաններու դասախոս ըլլալու համար մրցումներու կը մըտնայ: Նորէն չյաջողիր: Երկրորդ հարուածն էր ու էն զօրաւորը: Այդ օրէն սկսած կ'ատէ համալսարաններու փիլիսոփաները:

Յրանքֆօրդ կը քաշուի կատարեալ առանձնութեան մէջ ապրելու համար, ու հոն կը հրատարակէ նոր հատորներ, որոնք առաջիններէն աւելի յաջողութիւն չեն գտներ:

Կեանքին վերջերը միայն անգլիական ու գերմանական թերթեր իրմով կը զբաղին: Կեանքը կը սկսէր քիչ մը ժրպատիլ երբ մեռաւ:

Եօթնհասարակ մարդկութեան մեծամասնութիւնը խենդ կը նկատէր, ու ինքզինքը փոքրամասնութեան մէջ դնելու խելացիութիւնը ունէր: Ուրիշներուն զաղափարին կարևորութիւն տալ չէր թուէր, և սակայն անյազաբար թերթերուն մէջ կը փնտռէր իր վրայ գովեստներ:

Սոսկալի վախկոտ ու զիրազգեցիկ էր: Նամակ մը, պարզ նամակ մը, ահեր կուտար տխուր լուրի նկատումներով:

Իր յոռետեսութեան պատճառները եղած են իր անյաջողութիւնները: Եթէ իր գործերը գտնէին իր յուսացած յաջողութիւնը, Եօթնհասարակ պիտի մնար մեղամաղձոտ մը, բայց ոչ մարդատեաց յոռետես մը: Իւրաքանչիւր նոր հրատարակութիւն կ'աւելցնէր իր տխրութիւնը, ամէն նոր ջանք որ արգելքներու ու դժուարութեան կը հանդիպէր, սուգի մէջ կը նետէր գինքը: Կոնի մարդը չէր անիկայ:

Պօթն կը գրէ «Եօթնհասարակ կը վախնար շատ մը հիւանդութիւններէ, իր հետը կը պտըտցնէր պզտիկ գաւաթ մը, անձանօթ ու աղտոտ գաւաթներու մէջ ջուր խմելով հիւանդութիւն չ'աննելու համար: Դատերէ, գողերէ, հրդեհէ, յեղափոխութենէ, բարեկամներէ սոսկալի կը վախնար, նոյն իսկ իր շուքէն: Միշտ լեցուած ատրճանակներով ու սուրերով կը պտուկէր, ամենապզտիկ աղմուկի մը զէնքերը ձեռքը աննելով: 1836էն յետոյ գետնայարկ միայն կը բնակէր, հրդեհի ատեն շուտով փախչելու համար: Մօրուրը երբեք ածիլ չէր իտար, վախնալով որ սափրիչը վիզը կը կտրէ: Ամբողջ տարի մը վախերու մէջ ապրեցաւ, կարծելով որ զինքը պիտի գատեն ու դատապարտեն: Անգամ մըն ալ ինքզինքը ճշմարտապէս թունաւորուած կարծեց: Ամբողջ կեանքին մէջ սոսկաց ողջ թաղուելէ:»

Չեմ կրնար Եօթնհասարակ յոռետես փիլիսոփայութիւնը քննադատել: Յուցուցի թէ մարդը կատարեալ հիւանդ մըն էր, գրեթէ խենդ մը, իր մտաւորական արտադրութիւնը ուրեմն, այդ ցաւագար ուղեղին արդիւնքը, առողջ չէր կրնար ըլլալ:

Պուտայականութեան մեթոտաւոր փիլիսոփայութենէն թելադրուած, Լէօբարտի տխուր արցունքներուն տակ ու Գանդի վարդապետութեանց մղումովը կերտած ու դասաւորած էր իր զաղափարները, ու պատրաստած արդի յոռետեսութիւնը: Եօթնհասարակ փիլիսոփայութիւնը կը փնտռէ աշխարհային ահաբեկի ցաւերուն պատճառները, ու չզոհանալով այդչափով, պատճառներով ու արդիւնքներով կուզէ դարձանը գտնել այդ բոլոր ցաւերուն:

Եօթնհասարակ իր վարդապետութեանց գիտական, տըրմաբանական ձեւ մը տալով դպրոց մը շինեց որուն աշակերտեցին նորեր, ոմանք հեռանալով վարպետին գաղափարներէն, ուրիշներ բարեփոխելով զանոնք: Հարթման ասոնց մէջէն վարպետ մը եղաւ:

Հարթման, որ երջանիկ մահկանացուի մը ամէն առաւելութիւնները ունէր, յոռետես մը եղած է զաղափարով միայն, զասական հոսանքի մը մէջ բռնուած և ոչ թէ ճշմարիտ համոզեալ մը: Իր կեանքին մէջ, ջղային տըրկարութեան կամ ընտանեկան ժառանգական հիւանդոտ կապեր չի կան: Առողջ մը կ'երևայ, ամուսնացած, զաւակներու տէր, ապրելու ամէն զիրութիւն իրեն պարգևուած: Բայց ասոնք իր խօսքերն են, որովհետև իր կենսագրութիւնը ինքըրած է: Հարթման, իր ըսածին նայելով ջղային մը չէ: Կ'ընդունիմ: Իր վարդապետութիւնը ոչ ջղայինի մը և ոչ ալ դժգոհի մը կը պատկանի: Արցունքներ չի կան հոն, պարզ վարդապետութիւն մը որ կը հանգչի զաղափարներու վրայ: Կ'ընդունի ինք ալ, Եօթնհասարակ պէս թէ աշխարհի վրայ ցաւերը կը տիրեն, բայց անոնցմով չգիտեր: Իր փիլիսոփայական վարդապետութիւնը բողոքովին տարբեր է Եօթնհասարակինէն: Նոյն արդիւնքը կը գտնեն երկուքն ալ, տարբեր պատճառներէ ծնած:

Եօթնհասարակ կամքը իր ամբողջ վարդապետութեան խարխիւր կ'ընէր: Աստուած, հոգի, առանց նշանակութեան բառեր էին: Մարդ ազատ չէ, այլ իր կամքին գերին: Կրթութիւնը մարդու բնաւորութիւնը չի կրնար փոխել, կամքը բարեփոխել:

Հարթման, աւելի վարպետորդի, Աստուծոյ զոյնութեանը վրայ չիօսիր. ու նոյն իսկ անոր մատը կը տեսնէ այնպիսի խնդիրներու մէջ ուր իր խելքն ալ չհասնիր: Իրեն համեմատ, ամէն բանի վրայ, Աստուծոյ վրայ իսկ անգիտակիցը կայ. ան է որ կ'իշխէ, կը տնօրինէ: Անգիտակիցին փիլիսոփայութիւնը կ'ընէ: Աստուած նոյնիսկ իրեն համար անգիտակից մըն է: «Եթէ Աստուած աշխարհը ստեղծած ժամանակ որածին գիտակցութիւնը ունենար, աններելի էր այս չարութիւնը ընել ու աշխարհի տալ այս զարգացումը, ապուշ ոչնչութիւն մը:»

Եօթնհասարակ մէջ բերած կամքը չբաւեր Հարթմանի

քացատրել ամէն բան. կամքը կոյր է, իսկ մարդկային խելքը անգիտակից:

Անգիտակիցն է որ կեանքը սիրել կուտայ իր ցաւերուն հակառակ, կենդանիներուն կը պարզեւ պատրանքը որ կը ծածկեն կեանքին գոյատեւութիւնները:

Չեմ կրնար անշուշտ աւելի լայն բացատրութիւններով պարզել թէ Հարթման համոզուած մը չէ, այլ գասախօս մը որ լաւ կը ճանչնար իր մասնագիտութիւնը. բայց Անգիտակից մը ինքն ալ ուրեմն, որովհետեւ եթէ ունենար կեանքին, ու գոյատեւութեան գիտակցութիւնը, պիտի չուզէր ապրիլ:

Արդ՝ անգիտակցութիւնը պակաս մը չէ՞ ուղեղին մէջ. մարդ գիտակից ծնած է, գիտակից պէտք է ըլլայ. անգիտակցութիւնը ախտաբանական շրջանակներուն մէջ կը մտնէ. ու հոգ ալ առողջութեան վրայ մի խօսիք:

Հարթման, ուրեմն, հակառակ իր արտաքին հանդարտութեան, ու կեանքին իրեն պարզեւ առատ երջանկութեան, առանց տխուր ըլլալու, կը քարոզէ թէ աշխարհի մէջ ցաւերը կը տիրեն ու Աստուած ոճրագործ մըն է երկիրը ստեղծած ըլլալուն: Ընդունեցէք աս ինչպէս կ'ուզէք ձեր մտաւորական տրամադրութեան համեմատ, ձեր բանականութեան շողափայտներուն հետեւելով. բայց ես իբրև բժիշկ, կը խոստովանիմ թէ պակաս մը կը գտնեմ աս մարդուն ուղեղին մէջ որ իրեն տրուած երջանիկ կեանքին վրայ ցաւեր կը տեսնէ, ու այդ պակասը անգիտակցութիւնն է:



Որքան որ Գերմանիա հակամէտ է յոռետեսութեան այնքան հեռու է Ֆրանսան: Ֆրանսական միտքը որ գործնական է՝ յոռետեսութիւնը չ'ընդունիր իբրև վարդապետութիւն: Կեանքը իրեն աւելի զուարթ կ'երեւայ ու ցաւերը պակաս: Կ'ընդունի ընդհանրապէս զանոնք մեծ համբերութեամբ ու կը կռուի անոնց դէմ ճշմարիտ ճիշտերով: Դժբաղդութիւնը պատահար մըն է կեանքին մէջ որուն պէտք է յաղթէ մարդ իր կամքովը, ու հաստատաժտութեամբ:

Ապացոյց մըն է ասիկա թէ ցաւը Շօքէնհաուերի, Հարթմանի ըսածին պէս տիեզերական չէ, այլ երկրէ երկիր կը փոխուի, ու զլխաւորաբար զլուխ զլուխ: Յաւր երկրի վրայ չէ, այլ մարդու ուղեղին մէջ, ու անոր ընդունակութեան աստիճանը միայն զգալի է:

Այսպէս է որ Ֆրանսայի մէջ, ինչպէս ամէն խորհող ու զգացող ազգերու մէջ, եղած են յոռետեսներ, առանց սակայն գերմանական դասական յոռետեսներուն հաւասարելու: Ֆրանսայի մէկ քանի յոգնած զրազէտներու թով միայն կը գտնենք այդ յոռետեսութիւնը, որ աւելի՛ տխուր ազդեցութիւններու տաք ներշնչուած ողբ մըն է քան ճշմարիտ յոռետեսութիւն: Բօլ Պուրժէ, քընսած է անոնցմէ քննազրուարներուն գործերը, քննա-

զատած է վարպետի ձեռքով, առանց սակայն գիտական եզրակացութեան հասնելու:

Չեմ խօսիր Ռընանի ու Թէնի փիլիսոփայական վարդապետութեանց վրայ: Իմ կարողութենէս վեր ճիգեր ըրած կ'ըլլամ, հեռացած հոս գրած սահմաններէս:

Բայց կը յիշեմ Տիկին Ագերման, յաւիտենական լացող ու ողբացող բանաստեղծուհին, որ կեանքին տխրութիւնը երգած է ու մահուան ովսաննան ըրած:

Մարդատեաց կին մը, Տիկին Ագերման, որ մտաւորական կեանքէն զաս ամէն բան պարագութեան մէջ կը տեսնէ, որ կ'ապրի առանձնութեան մէջ, կարգալով ու գրելով, ինք իր մէջ թաղուած: Պերլին կ'երթայ այս արդէն տխուր ու մելամաղձոտ կինը ու հոն սիրած յոռետեսութեամբ կը լեցուի: Կ'ամուսնանայ Ագերման անուն աստուածաբանութեան անաստուած դասատուին հետ. ամուսինը կը մեռնի երկու տարի յետոյ:

Տիկին Ագերմանի ցաւը անհուն էր: Առանց հաւատքի, առանց յոյսի, գերմանական յոռետեսութեամբ սնած, իր սիրած ամուսնոյն մահուան զիմաց անկարելի էր գտնել իր մէջը ու կէ ճիգ դիմադրելու, կռուելու կեանքը կ'երևայ իրեն ահաբեկ ոչնչութեան մը տակ, սր ցաւերը միայն կը տիրեն: Ու կատարեալ առանձնութեան մը մէջ կ'ապրի իրեն ցաւերուն հետ զլուխ զլուխ: Այս պայմաններուն մէջ գրած է իր ողբերը, իր յուսահատութիւնը, ու անզուսպ փափաքը որ աշխարհ վերջանայ, կեանքը դադրի:

Ո՞՞ ինչ անհոռէ ոչրախոչրիռէ, այսքան ցաւերէ յետոյ, Առերակներուն մէջէն, դիակներուն վրայէն Ազատագրութեան սա աղաղակը ձգել, «Ալ մարդ չի կայ երկնքի տակ, մեքը վերջիկներն եկք»:

Բանաստեղծի արցունք, եւ ոչ թէ տեսական յոռետեսութիւն Տիկին Ագերմանի ողբը: Նոյնը կրնամ ըսել Պօլէնի համար ալ: Տիկին Ագերման, ցաւերու տակ ընկճած իր բոլոր բանաստեղծութեանց մէջ կը գնէ իր զգոհի սգաւոր ձայնը, Պօլէն օրուան տրամադրութեան համեմատ կուլայ, կամ կը խնդայ: Համոզուած մը չէ ինք ալ, այլ հիւանդ բանաստեղծ մը ինչպէս ինք կը խոստովանի:

«Իմ ջղացաւս մշակեցի հաճոյքով ու սոսկումով. հիմա զլուխս միշտ կը դառնայ, եւ այսօր 23 յունվար 1862, զարմանալի նախազգեցութիւնը ունեցայ. իմ վրայէս խենդութեան անցած հովը զգացի»:

Խոստովանութիւնն է ասիկա հիւանդի մը որ քաջութիւնը սնեցած է բարեկամի մը գրելու: Շատեր պիտի չունենան այս ուժը, ու իրենց մէջ պիտի չփնտեն իրենց ցաւերուն պատճառը. տիեզերքը, մարդիկը, բնութիւնը պիտի անիծեն, անոնց մէջ, անոնց վրայ պիտի փնտեն ու գտնել կարծեն իրենց գոյատեւութեանց պատճառը:

Իւրին պիտի ըլլար Ֆրանսայի ժամանակակից բանաստեղծներէն օրինակներ բերել. Սիլվի Բրիւսովէն,

Լրգօնթ տը Լիլէն: Բայց ամէնքն ալ բանաստեղծներ են, տխուր, հեծկտացող:

Մինչեւ Կիսթավ Ֆլօպէո ոտանաւորի ձեռով միայն կը յայտնուէին յոռետեսութեան ցանցառ նմոյշները: Վէպերու ու նորավէպերու դարը այնպէս ինչպէս կը հասկընանք այսօր՝ դեռ չէր սկսած, իրական դպրոցը դեռ չէր ծնած: Ֆլօպէո նոր դպրոցին հայրը, Մատամ Պօլարիի մէջ կեանքին յոգնութեան նշանները գրաւ: Վէպին տալով յոռետես շունչ մը, որ իր տեսակին մէջ, խոստովանինք, զրուի գործոց մըն է:

Ֆլօպէո կը գրեր, դեռ երիտասարդ. «Ջարմանալու բան, երջանկութեան վրայ ինչպէս քիչ հաւատքով ծնած եմ: Պատիկուց կեանքին կատարեալ նախազգացումը ու նեցայ, դարձահոտ խոհանոցի մը պատուհանէն դուրս փախած հոտին կը նմանէր: Ուտելու պէտք չի կար հասկընալու համար թէ կը փսխեցնէ:»

Իր բոլոր վէպերուն մէջ կեանքին նողկանքը, ապրելու դժբաղդութիւնը կը պոռթկայ: Իր անձերը անկարողներ են կոտելու, ու Սալանպօի պէս մեղամաղձոտ կը մնան իրենց փափաքին հասնելէն ալ ետքը:

Բայց Ֆլօպէո կատարեալ ջլախտաւոր մըն էր: Ջրային տխուր հիւանդութիւն մը պատճառ եղած էր անոր առանձնութեան. չէր համարձակեր ընկերութեան մէջ մտնել, մարդոց հետ ապրիլ միշտ այն սոսկումով թէ յանկարծ ճիշերը կ'արթննան ու կիյնայ գետին ախտէն բռնուած:

Կօնգուտ եղբայրները, իրենք կը խոստովանին իրենց ցաւը. անոնց մարմինն ու հոգիին հաւասարակշռութիւնը կորսուած է, ու իրենց շուրջը ցաւեր միայն կը տեսնեն, ցաւերով միայն կ'ապրին: Ժիւլ տը Կօնգուտ որ կեանքին վերջերը ջրային չափազանց զրգոթութեան մը մէջ էր, նոյն իսկ պատիկ աղմուկ մը չէր կրնար հանդուրժել: Եղբայրը կը գրէ թէ, Ժիւլ մէռած էր չափազանց աշխատութեան: Երեք շօրս օր առանց դուրս ելլելու, գաղափարներուն ետեւէն ինկած, ձեւին, ոճին կատարելութեան գերիները, նախադասութեան մկրատումին վրայ ժամերով խորհելով կը մաշեցնէին ուղեղին: «Խորհեցէք թէ, կ'ըսէ, մեր ամբողջ գործը, որ կարելի է իր եզականութիւնը ըլլայ, եզականութիւն շատ սուղ վճարուած, կը հանդիմ ջրային հիւանդութեան վրայ. հիւանդութեանց պատկերները մեզմէ քաղցինք, և այնքան ինքզինքնիս գննեցինք, քննեցինք, կտրտեցինք որ ամենասուր զգայնականութեան մը հասանք:»

Յոռետեսութիւնը ուրեմն կազմուածքի ու ուղեղի արդիւնք է: Երկրէ երկիր, անձէ անձ կը տարբերի. ինչպէս ջրային բոլոր անհանգստութիւնները: Մեր մէջը, բժիշկներս, կ'ըսենք թէ ջրային հիւանդութիւններ չկան այլ ջրայիներէ իւրաքանչիւրը իր ուղեղային տոկունութեանը համեմատ անուցանելով ախտը: Յոռետեսութեան համար նոյնը կրնանք ըսել: Յոռետեսներ միայն կան, այլ ոչ յոռետեսութեան:

Առանց կիրքի, հանդարտութեամբ քննելով բոլոր յոռետեսները, կը հասնինք սա երկրորդ եզրակացութեան թէ, յոռետեսութիւնը հիւանդութիւն մըն է, մեղամաղձոտութեան մէկ ձեւը որ կը մօտենայ աւելի խենդութեան: Ամէն հիւանդութեան պէս իր պատճառները, իր նշանները ունի: Յոռետեսներու կենսագրութեան մէջ տեսանք ուղեղային անանկ տրամադրութիւններ որոնք կը բաւեն խենդութիւնը արթնցնելու մարդուս մէջ. ուրիշներու ջով գտանք զօրաւոր պատճառներ ուղեղին հաւասարակշռութիւնը խանգարելու համար:

Բայց, պիտի ըսէք. ինչպէս բացատրենք այն մէկ քանի յոռետեսներուն պարագան, որոնց ջով ոչ ծննդական տրամադրութիւն կը գտնենք, և ոչ ալ բաւականաչափ պատճառներ: Ինչ բացատրութիւն տալ Հարթմանի յոռետեսութեան:

Հարթման ճշմարիտ յոռետես մը չէր, այլ յոռետեսութեան դասախօս մը: Հարթման այնքան քիչ հիւանդ էր, ու քիչ համոզուած որ կը վայելէր կեանքը իր լաւ կողմերով: Ամէն փիլիսոփայ որ յոռետեսութիւն կ'աւանդէ, իբրև իր մասնաճիւղը, հիւանդ մը չէ: Հարթման անդիտակից անհաւատ յոռետես մը, լաւ դասախօս մը եղած է սակայն:

Ճշմարիտ յոռետեսներ ալ կան, անոնք չեն գրեր, չեն դասախօսեր, մեղամաղձոտներն են անոնք որոնց հոգին բաց է մարդկային ամէն ցաւերու. եւ կը զարմանան՝ Ֆլօպէոյի պէս՝ թէ այնքան լաւ կազմակերպուած են մարդիկ աշխարհային ցաւերուն: Բուն յոռետեսները անոնք են, առանձնութեան մէջ, լուութեան մէջ ապրող համոզուած թէ՛ կեանքը չարժեք ապրիլ, ու անձնասպան կ'ըլլան: Յոռետես վարդապետութիւնը ու բանաստեղծութիւնը անոնց տարտամ ուղեղին մէջ կեանքին ոչնչութիւնը կը գտնողակէ. անոնցմէ էին վէրթերի այն ընթերցողները որոնք անձնասպան եղան: Ահա ինչու համար յոռետես գրագիտութիւնը շատ փաստակար կը գտնեմ ոչ միայն դաւանողներուն, այլ զլիաւորաբար ընթերցողին: Ահա ինչու համար կուզեմ որ առողջ գրականութեամբ սընուցանենք ամբօխը, ընթերցողը:

Յաջորդ յօդուածին մէջ կը խօսիմ Հայ յոռետեսներուն վրայ:

Բարիգ ՏՐ. ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Նպաստամատոյց Անգլիացի տիկիննե-  
րու ընկերութիւնը անգլիական ժամուրի հաղորդած է  
Վանէն Տքթ. Բէյնօլտսի մայիս 19 թուակիր նամակը  
որ շատ տխուր տպաւորութիւն մը 'ը թողու, որքան որ  
ալ Հայաստանի իրական վիճակը արդէն քաջածանօթ  
եղած ըլլայ:

Այդ նամակը կը տեղեկացնէ թէ այս տարի Վան  
ղրկուած նպաստի զուժարը զգալապէս նուազած է, մինչ  
հայ ժողովրդին թշուառութիւնը հերուան պէս ծանր է:  
Մարդասէր Տօքթօրը ձեռքը ունեցած զրամովը կը շա-  
նայ ամէնուն օգնութեան հասնիլ, բայց գեղերէն շատերը,  
որոնք էն կարօտեալներն են, օգնութիւն չեն ստանար,  
վասն զի պատրաստի ստ. կը ամէնուն չբաւեր: «Ու այդ  
գեղերէն լուռած աղաղակը քարէ սրտերն իօկ կրնան կակ-  
ղեցնել» կը գրէ Բէյնօլտս:

Ու այդ գեղերուն կեանքի (։) նկարագրութիւնը իր  
պարզութեան մէջ սարսուղ զեցիկ է:

«Երթի՞նք տղաքները ա'լ կմախքի են վերածուած,  
կը գրէ Տօքթօրը, ու շատերն անոնցմէ և ոչ իսկ իրենց  
խրճիթներէն զուրս ելլելու կարողութիւն ունին: Ժողո-  
վրդին մեծամասնութիւնը բացարձակապէս բան մը չը  
գտներ որ ուտէ, բացի խոտերէն ու արմատներէն զոր  
կրնայ ժողովել. և ատոնց հետ քիչ մը ալիւր կամ ցորեն  
խառնելով ապուր մը շինելու անկարելիութեան մէջ կը  
գտնուի: Գեղերէն մէկէն ուր մեր մէկ ուսուցիչ տղան  
կը գտնուի, ամէն օր անօթութենէ մեռնողի մը լուրը կը  
հասնի:»

Տօքթօրը իր տրամադրութեան ներքե գտնուած միջոց-  
ներով քիչ շատ օգնութիւն ըրած է թշուառագոյն տեղե-  
րէն մէկ քանիին, բայց շուարած մնացեր է թէ ինչպէս  
օգնութեան պիտի հասնի ուրիշներուն և «Ծա'նր է ասանկ  
օրեր ապուր, կ'աղաղակէ Տքթ. Բէյնօլտս, վասն զի հար-  
կադրուած ենք օգնութեան համար եղած խնդրանքները  
մերժել: Այս դժուարութեանց նախորդ տարիները ձեռ-  
քերնիս բաւական բան ունէինք որով կարող կ'ըլլայինք  
յուսահատական պարագաներէն շատին բան մը ընել. ու  
այսպէս տառապանքները կը սահմանափակուէին և մենք  
բացարձակօրէն օգնութիւն մերժելու տխուր հարկին մէջ  
չէինք գտնուեր միշտ:»

Բայց ապագան ներկայէն աւելի ահաբեկիչ կ'երևի  
Տօքթօրին աչքերուն: Թշուառ գեղացիներ որպէս զի կա-  
րող ըլլան այսօր ապրիլ, կը պատրաստուին իրենց արտե-  
րուն գալիք հունձքը հիմակուց ծախել, կործանարար  
զիններով. կը խոստանան երկու երեք չափ ցորեն տալ այն  
մէկ չափին տեղ զոր հիմա փոխ կ'առնեն: Կը յուսա-  
ցուի որ յառաջիկայ հունձքը լաւ պիտի ըլլայ և ցորենին

զինր պիտի կտորի ու պիտի մօտենայ ուղիորակներն,  
բայց ինչ օգուտ խեղճ գեղացիին որ պիտի պարտաւորուի  
այս տարի ունենալիք ցորենին մեծագոյն մասը անցած  
տարուան վաշխով փոխառութեանը համար հատուցանել:  
Հետևաբար ապագան ներկայէն լաւագոյն պիտի չըլլայ:

«Ու մինչ ժողովուրդը այսպէս սովամահ կը կորնչի,  
կը գրէ Բէյնօլտս, Կառավարութիւնն ալ անողօքելի խըս-  
տութեամբ յետամնաց տուրքերը կը պահանջէ: Կոտո-  
րածներէն յետոյ հարկերու հաւաքումը յետաձգուեցաւ,  
և ժողովուրդը կը յուսար թէ այդ տարիներու տուրքերը  
այլ ևս պիտի չպահանջէին. Հիմակ ամէն միջոց ի գործ  
կը գրուի որպէս զի հին տուրքերը ամբողջապէս գանձուին:  
Ու ծայրահեղ թշուառ ժողովրդէն զրամ քաշելու համար  
Կառավարութիւնը ծայրայեղ ապօրէն միջոցներու կը դի-  
մէ. կը բռնադատէ գեղացիները ծախել իրենց արտերը ու  
տան կարասիքները: Ա'լ խեղճերուն քով սիրտ չէ մնացած,  
և ուրախ պիտի ըլլան եթէ կարենան իրենց արտերը, տու-  
նը տեղը ձգել և երթալ գաղթել ուրիշ աւելի յուսատու  
տեղուանք: Այս փափազն ալ իրագործել կարելի չէ: Ո'չ  
կառավարութիւնը գանձուց կը ձգէ որ երթան, ո'չ ալ տեղ  
մը կայ որ զիրենց ընդունի: Մերթ ընդ մերթ անհատ մը  
կը յաջողի իշխանութեանց ձեռքէն խոյս տալ և զիջերանց  
սահմանազուլիւր անցնիլ, բայց ժողովրդին ամբողջու-  
թիւնը վերին աստիճանի յուսահատութեան մասնուած  
է: Քիւրտերու հարստահարութիւններն ալ կը շարու-  
նակուին եւ այս գաւառին հայ ժողովուրդը արագապէս կը  
նուազի:

«Բարեբաստ եմ ըսելու որ յառաջիկայ հունձքը ար-  
տասովոր կերպով առատ ըլլալու յոյս կայ. բայց մինչեւ  
որ հասնի դեռ երկու ամիս պէտք է, ու ժողովուրդը մին-  
չեւ այն ատեն կեանքը տանելու միջոց ունենալու է:  
Ու յետոյ, կրկու ամսուան մէջ հունձքին կրնայ դժբաղ-  
դութիւն մը պատահիլ:



«Հայաստանի Բարեկամներ»ու ընկերութիւնը այս  
տարուան օկիզբէն ի վեր 878 անգլիական ոսկի զրկած  
է Վան. այդ գումարէն 47% ոսկի որբանօցներու յատ-  
կացուած է: Հայաստան 600ի չափ որք կը խնամուին.  
ատոնցմէ 217ը Խարբերդի շրջանակին մէջ կը զբտ-  
նուին:

Սակայն կը վախցուի որ այս թիւը պահել եւ կամ ա-  
ւելցնել անկարելի պիտի ըլլայ, նուիրատուութեանց նը-  
ւագումին պատճառաւ: Ամէն օր աղերսազիւրներ կը արուին  
որբեր ընդունելու համար, սակայն միսիոնարները մեր-  
ժողական պատասխան տալու սրտածմրիկ հարկին մէջ կը  
գտնուին: Ու այդ տղաքը զրեթէ մերկ, եւ միշտ անօ-  
թի, թափառական կը մնան, ու իսլամացման մեծ վտանգ  
կայ անոնց համար:

Վան Ամերիկեան միսիոնարներու և Հայոց միջև սքան-  
չելի համաձայնութիւն կը տիրէ, եւ միասին կ'աշխատին

Որբանոցներու բարեկաւացմանը:

Օր. Ուիլսն որ վերջերս Վան զրկուեցաւ Հայաստանի Բարեկամներուն կողմէն, կը գրէ թէ «Տքթ. Բէյնօլտս և իր կինը իրաւունք ունին հպարտանալ իրենց գործերուն համար: Իրենց հասուցած աշակերտները հիմակ իրենց գեղերը դաս կուտան»: Այս տղոցմէն ութ, ինը հաս, կը գրէ Օր. Ուիլսն, երկու տարի կամ քիչ մը պակաս, Վան անցընելէ յետոյ հիմակ իրենց ալ դպրոց բացած են 40էն 80 մանուկներու համար որոնցմէ շատը արգէն կարգալ սկսած են: Այս տղաքը հրաշալի ազդեցութիւն կը գործեն իրենց շուրջը եղողներուն վրայ: Աղջիկներն ալ նմանապէս կարգալ, գրել, կարել կը սորվին: Եւ գեղերը ասանկ բաներ գիտցողները քիչ են:

Օր. Ուիլսն հրաշալի կը գտնէ հայ որբերուն ընդունակութիւնը կրօնական կրթութեան համար. եւ հետեւեալ ուշադրաւ յայտարարութիւնը կ'ընէ «Անկա տղաքը շատ բաներու մէջ առելի յասպարացած են քան թէ իրենց տարեկից Անգլիացի տղաքը:»



Տիարպէքիւրէն հասած լուրերը կը տեղեկացնեն թէ տեղական իշխանութիւնը շատ գէշ աշջով կը նայի Հայ և Ամերիկեան որբանոցներուն վրայ, որոնք ամենախիստ հսկողութեան ներքեւ են: Որբանոցներուն վարիչները ուղեցին արհեստի ճիւղեր հաստատել, բայց կուսակալ Խալլըթ պէյ թող չէ տուած, յայտարարելով թէ ինք համազգային որբանոց պիտի բանայ: Այդ հաստատութիւնը որ եթէ երբեք զուրկ ելլէ իսկ, շատ ժամանակի կարօտ է. ու հայ քրիստոնեաները չեն կրնար իրենց որբերը յանձնել իւրամաներուն որոնց վարժարաններուն մէջ աշակերտ, վարժապետ ամէնքն ալ ծայրայեղ անբարոյականութեամբ կ'ապրին, իրենց գենին թոյլտուութեամբ:

Ինչպէս որբերուն նոյն եւ հայ բանտարկեալներուն նկատմամբ կառավարութիւնը շատ գէշ տրամադրուած է: Պատրիարքարանէն Տիարպէքիւր թշուառ հայ բանտարկեալներուն զրկուած 25 ոսկիի նպաստին բաշխուած Խալլըթ պէյ արգիլեց, առարկելով թէ Թիւրքիոյ բանտային օրէնքներու տրամադրութեանց համաձայն, բանտարկեալներու քով 25 զուրուշէն աւելի չկրնար գտնուիլ:

Զինուորական յետամնաց տուրքերու խնդիրը ամէն տեղի նման Տիարպէքիւր ալ քրիստոնեայ ժողովուրդներուն մտատանջութեան մեծագոյն առարկան է: Հարկահաւաքները եւ ոստիկանները սփռուած են շուկաները. որ քրիստոնեան որ պատահին կը բռնեն կը տանին տուրքը գանձելու համար: Ով որ պատրաստ զրամ չունի, վրայէն կ'առնեն ինչ որ գտնեն, ժամացոյց, զրեւտ, մէջքի գօտի կայլն: Բոլոր քրիստոնեաները իրենց պատրիարքարաններուն փոխադարձաբար զրամ են վիճակնուն ծանրութիւնը, բայց ո՛ր է զոհացուցիչ պատասխան չէ ստացուած: Թիւրքերը լսելով քրիստոնեակց այս ապարդիւն դիմումները տ՛լ աւելի երես առին, ու հրապարակաւ կը ծաղրեն զա-

նոնք և երեսնին կը թքնեն:

Յոյսեր կային որ մարտի այս տարեգլխուն, վիճակին դարձան մը պիտի գտնուի, և ահա հեռագիրը լուր բերաւ թէ սուլթանը բարեհաճեր է տուրքերուն վրայ 6 առ 100 յաւելուած մը ընել: «Նմանեցանք, կը գրէ Տիարպէքիւրը մը, աղիւս կրող խորայեւացիներուն, որոնք երբ Փարաւոնէն խնդրեցին աղիւսին թիւը պակսեցնել, անկա զայրանալով ելաւ յարդն ալ կտրեց:» Ժողովրդին ամենա ստուար մեծամասնութիւնը տան փալանս ու անկողինը ծախելով երեք տարուան զինուորական տուրքը կը վճարէ:

Հայոցմէ մաս մը խմբովին թրքանալու կը հակամտին. ուրիշ մաս մըն ալ կը մտաբերէ ուրիշ եկեղեցիներու դիմել, և անոնց նըֆոշս տեսարակին մէջ արձանագրուել, վասն զի բաշխուածի մէջ ալ մեծ անիրաւութիւն տեղի կունենայ: Հայ արհեստաւորները կը ծանրացնեն հարուստներուն բեռը. իսկ հարուստներն ալ բնաւ չեն խնայեր արհեստաւորները և կուզեն անոնց վրայ փոխադրել զինուորական տուրքի մեծ մասը: Գիշեր ցորեկ կոհները անպակաս են: Գիշեր ցորեկ կոհը անպակաս է Հայոց մէջ, ու թիւրքն է որ կը շահի: Մինչ այս մինչ այս Տիարպէքիւրի հայերը երկու ամսուան մէջ 1,000 ոսկի վճարեցին, նոյնքան մըն ալ միւս քրիստոնեայ վեց ժողովուրդները: Իսկ դեռ 1,000 ոսկի կը պահանջուի Հայոցմէ:

Իսկ գեղերու վիճակը նկարագրելու համար բաց ու բացատրութիւն կը պակոհին: Խեղճ քրիստոնեաները կորեկ հացի կարօտը կը բաշեն և խոտածարակ են և այս թշուառութիւնը կը պարտին հարկահաւաքներուն: Ասոնք 10-20 ոսկի հեծեալ կը մտնեն գեղ մը. և կը սկսին պոռալ «քեաֆիրներ, տէրութեան հիւրերը եկած են ձեզ, կեր բերէք մեր ձիերուն»: Գեղացիները եթէ դարի ունենան իրենց կուտեն: Որ գեղը որ այս հրամանը չկատարուիր հարկահաւաքները կը մտնեն տուները, ու հողէ փեթակները կոտրելով անոնց մէջ ինչ որ գտնեն՝ պըլզուր, ձեծած և այլն, կը լեցնեն ձիերուն առջեւ: Ետքէն ալ իրենց համար խորտիկներ, հաւկիթ, հաւ կը պահանջեն. ու երբ գեղացին տալու բան մը չունի, ձեծը կուտէ ու կուտէ: Ու գանձման տանջանքը կը սկսի: Ինչ ընէ գեղացին, փրկութեան ճար չի կայ, ուստի ինչ որ ունին, եզ կամ ուտեստ կը հանեն կէո գնով Քիշրտերուն կը ծախեն, ու երեք տարուան տուրքը կը վճարեն: Ոստիկան մը բաղաբը պատմած է թէ՛ հայ մը իր մանչ զաւակը, ուրիշ մը իր աղջիկը թիւրքերուն ծախած են և ոտակը տուրքի վճարած:

Պէտք է սակայն նշանակել թէ Թիւրք տարրի խոհուն մասը այս բոլոր չարագործութեանց վրայ հաշտ աշջով չնայիր. դժգոհ է կառավարութեան կեղեքիչ գրութեանէն: Ու մանաւանդ Քիւրտերը զսպելու համար կառավարական թուլութիւնը շատ կը խոզովէ դիտենք: Համիտիէ Քիւրտերը միայն քրիստոնեակն թշնամիները չեն այլ եւ

Թիւրքին ալ: Չեղբերին ինկածը կը թալլեն, կուզէ քրիստոնեայ ըլլայ կուզէ իտլամ. եւ կարգին որ բերեն, հանդիպածը կը սպաննեն սոսի մը ջարդելու պաղարիւնութեամբ:

Թիւրքերուն մէջ նաև տարածուած է այն զրոյցը թէ սուլթանը ըսած է, «Քանի որ ես ողջ եմ Համիտիէները պիտի գործեն. իմ մեռնելէս ետքն ալ իմ յաջորդներէս ով որ առ Համիտիէներուն ձեռք դպցնէ անոր եօթը ազգը անիծեալ ըլլայ:»

Կեղծարարութիւն մը: Պարաւոնի Բէիս Պրօ հայը միւս տիւրին կողմէ ձերբակալուած էր և բանտարկուած, իբր թէ Մաւզէրով զինեալ 50-60 հայ յեղափոխականներ կը պահէ: Այս զրպարտութիւնը բաւական չհամարելով միւստիւրը թրքերէն թուղթ մըն ալ կը գրէ, որուն մէջ երկարօրէն կը պատմուի թէ այդ գաւառակին մէջ բազմութիւ յեղափոխականներ կը գտնուին: Այս թուղթը կնքել և ստորագրել կ'ուտայ զեղին քահանային եւ երեկիներուն: Ասոնք ամէնքն ալ թիւրքերէնի անտեղեակ են. ու իրենցմէ մէկ երկուքը միայն հայերէն սլարզ կարդալ մը եւ զրբել մը գիտեն: Կարծեր են թէ անկարևոր թուղթի մը տակ է որ իրենց կնիքը կը դնեն:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Դ Է Մ Ք Ե Ր

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Դեռ 1890ին Արշակ Զօպանեան Պոլիս Կեդրոնական վարժարանը աշակերտ էր. տասը տարուան ժամանակա միջոցէ մը ետքը հայ ազգին էն հանրածանօթ դէմքերէն մին կը ներկայանայ: Յունիս 16ին Բարիզ վճարիլի թատրոնը մեր որբերուն ի նպաստ կազմակերպուած հանդէսը Անահիտի խմբագրապետը իբր օրուան նորութիւնը կը փայլեցնէ. թէ և երիտասարդ բանաստեղծը շորո տարի է Եւրոպայի մէջ իր գործերովը միշտ ազգին ուշադրութիւնը ու համակրանքը գրաւած է: Զօպանեան 1891 էն 1895 լոկ բանաստեղծ մը ձանչցուեցաւ. մեր կեանքին յեղաշրջումը բանաստեղծն ալ քաղաքական անձնաւորութեան յեղափոխեց. ու հիմա ոչ թէ գրագէտը այլ Հայոց վերածնունդին աշխատողն է սր ժամանակակից գէմքերու մէջ առաջնակարգ տեղ մը պէտք է բռնէ:

\* \* \*

Յունիս 16ի հանդէսին առթիւ Նոր Կեսաքի թղթակցութիւնը կ'ըսէր. «Այս ամէնը իրագործողը, պէտք է ըսել բարձրաձայն, միակ անձ մըն է, Պ. Արշակ Զօպան»

«եան, որ կամքի ու բանիմացութեան հրաշքով մը, մէն «միայնակ, կրցած էր բարի կամեցողութիւնները արթնցնել «մեր անունին շուրջը ու յետոյ բերել զանոնք համախմբել «այս զեղեցիկ հանգէսին մէջ:» Ուրիշ մասնաւոր նամակներ ու տեղեկութիւններ ալ, որոնք հրատարակութեան սահմանուած չեն, սքանչացումով կը խօսին Զօպանեանի գործունէութեան վրայ: Բայց փոքր ինչ ուշադրութիւն կը բաւէ ըմբռնելու համար թէ աշխատութիւնը ինքնին բաւական պիտի չըլլար այդ բոլոր տաղանդները հայկական դատին շուրջը համախմբելու համար: Հայութիւնը պէտք էր սիրցնել տալ այդ մեծ մտքի ու մեծ սրտի տէր Փրանսացիներուն: Զօպանեան իր ցեղը օտարներուն համակրելի ընծայելու գաղանիքին թափանցած է. ինքզինքը սիրցնել և յարգել տալով իր ազգն ալ իրեն հետ մեծարել եւ սիրցնել կուտայ:

Տաղանդաւոր Փրանսացիներու համարուած գրաւելու համար նախ եւ առաջ պէտք է անոնց մօտ տաղանդաւոր ներկայացուցիչներ ունենանք: Անահիտի խմբագրապետը լաւ թափանցած է Փրանսերէն լեզուին. հիմնովին կը ճանչնայ տիեզերական մատենագրութիւնը և մասնաւորապէս Ֆրանսականը: Մատենագիրներու, զեղարուեստագէտներու ակումբի մը մէջ անձնալստահութեամբ կը խօսի: Չոր միտք մը չէ. խանդավառ մըն է, այսինքն հաւատացեալ մը. ու իր հաւատքովը կը հրահարէ ամէն անոնք զոր կ'ըզձայ հայկական դատին շահագրգռել:

Գրական աշխատութիւնները զոր Զօպանեան Բարիզ ըրած է, կը պարզեն այն ծրագիրը որուն գործարութեամբը հայկական դատին օգտակարապէս ծառայելու կը հաւատայ: Երբ 1895ին վերջերը Զօպանեան Փրանսա անցաւ, նախ և առաջ ջանաց Հայաստանի աղէտները, եթէ կրնանք այսպէս ըսել, ժողովրդականացնել: Յիշենք թէ այդ միջոցին բազմաթիւ քաղաքական ու սեղանաւորական շահեր միացած էին, Պ. Հանօթոյի հովանաւորութեամբ, Փրանսայի ականջը խցել Հայաստանէն հասած ո' և է աղմուկի դէմ: Հազիւ թէ մամուլին մէջ մերթ ընդ մերթ բողոք մը կ'արձակուէր հայկական կոտորածներուն համար, բայց լուսթիւնը շուտով կը տիրէր: Բարիզի հայ գաղթականութիւնը շատ ջանքեր կ'ընէր հանրային կարծիքը ի նպաստ մեզի զրգովելու համար, բայց միշտ կը յաղթուէր քաղաքականութեան եւ սեղանաւորութեան ահարկու ուժէն: Պոլսէն Բարիզ սուրացող երիտասարդը այդ հայ խումբին թանկագին աջակից մը եղաւ իր տաղանդովը եւ իր գործունէութեամբը:

Զօպանեան նախ և առաջ մամուլին հետ յարաբերութիւններ հաստատեց, ջանալով օրագրողները համոզել թէ հայկական կոտորածները չափազանցուած չէին անգլիական մամուլին մէջ, անգլիական շահերուն իբր թէ գոհացում տալու նպատակաւ: Յոյց տուաւ Հայաստանէն ստացած իր նամակները, որոնք կամ ամբողջապէս, կամ մասամբ շատ անգամ հրատարակուեցան: Ու քիչ ետքը հրատարակեց Ֆրանսերէն հատոր մը «Հայաստանի կոտորածները» վերնագրով, որուն յառաջաբանը քաղաքա-

կան մեծանուն անձնաւորութիւն մը գրած էր՝ Պ. Բլէման-սօ: Այդ հատորը պաշտօնական ստուգարաններու վրայ Հիմնուած, տարածուելով Ֆրանսա, արթնցուց ժողովուրդը, ցնցեց հանրային կարծիքը: Այլ ևս անհնարին էր հայկական աղէտներուն պարտկումը: Կրօնական եւ քաղաքական անձնաւորութիւններ ալ հետզհետէ սկսան զբաղիլ հայկական խնդրով: Հայաստանի հարցը Ֆրանսայի առջեւ դրուեցաւ:

Չօպանեան չէր յուսար որ իր ցեղին մեծ ծառայութիւն մը կրնար մատուցանել անոր թշուառութիւնը պարզելով միայն. հայ ազգին համար լաւագոյն է յարգանքի արժանանալ քան թէ կարեկցութեան. ուստի բանաստեղծ երիտասարդը հետամտեցաւ իր ցեղին յատկութիւնները ցոյց տալ: Ռելիա տե Ռելիաի մէջ Չէյթունի ապստամբական շարժումը նկարագրեց ոգևորեալ շունչով, ու Ալասիի Չէյթունի քառուսնը հինգ օրուան պատերազմին պատմութիւնը ֆրանսերէնի վերածեց, բարիքեան նրբացած ճաշակին համեմատ: Թարգմանեց Բաֆֆիի Ճէլալէտտինը. ու հայ մատենագրութեան պատմութիւնը իր մեծ զիծերուն մէջ ներկայացուց հրապարակաստեղծեամբ, տետրակով և հանդէսներու միջոցաւ: Ամէն կերպով ջանաց որ Ֆրանսացին ըմբռնէ թէ հայը ազնիւ ցեղ մըն է, մեծ յատկութիւններով օժտուած: Ու Ֆրանսայի մէկ ծայրէն միւսը Հայոց պատմութեան շրջունը դասախօսը եղաւ: Ասանց տեսանելի աշխատութիւններ են. շատ էջեր պէտք են պատմելու համար այն ընդարձակ յարաբերութիւնները զոր Չօպանեան հաստատած է Ֆրանսայի զրական, գեղարուեստական, քաղաքական, օրագրական աշխարհին հետ, միայն և միմիայն հայկական դատին ծառայելու նպատակաւ:

\* \* \*

Հայկական խնդրին էն տաք օրերն էին 1895ին. ու Պոլիս կը զգայինք թէ Բարիզի հայ գաղթականութիւնը պէտք ունի աշակցի մը որ լաւ ֆրանսերէնին միացնէ զբրտական տաղանդ, և գործելու ընդունակութիւն: Մտածեցի թէ հայկական դատին օգտակարապէս ստատրելու համար փափագուած բոլոր յատկութիւնները Չօպանեան իր անձին մէջ կը միացնէ. ու օր մը Սըլանտիտ պատմական քաֆէին մէջ բացուեցայ իրեն: Յօժարակամ գտնուեցաւ անմիջապէս մեկնելու եւ երթալ աշխատիլ Բարիզ: Մենք ալ նախնական ծախքերը հայթայթելու պիտի չվարանէինք. բայց այդ միջոցին զանազան զեպքեր վրայ հասան, ու այդ խորհուրդը առժամապէս անգործադրելի մնալու դատապարտուած էր: Բայց Չօպանեան այլ ևս հանդարտ չէր կրնար նստիլ: Տարին որ այնքան յուսալից կը սկսէր մեր դատին համար, ահա յուսահատութեամբ վերջանալու վախը կ'ազդէր. հայ արիւնը կը թափուէր, կոտորածներու թուականը բացուած էր, ու Ֆրանսա գրեթէ լուս կը մնար: Օր մըն ալ Չօպանեան եկաւ յայտարարել թէ ինք պիտի մեկնի, իր ուժին վստահացած. ազգը զոհողութեան կա-

րօտ էր: Թողուց սիրելիներն ու բարեկամները, ասպարէզը զոր այնքան կը սիրէր և որ հանգստաւէտ կեանք մը կը խոստանար իրեն. հրաժարեցաւ Պոլսոյ մէջ հրապարտութիւններէն. և հոկտեմբերի օր մը գաղտագողի, փախստական մը մեկնեցաւ Պոլսէն զէպի անձանօթը, վստահ սակայն թէ բան մը պիտի ընէր իր ազգին համար:

Քանի մը ամիս ետքը ես ալ Բարիզ կը հասնէի, ու Չօպանեանը կը գտնէի Մոնթ փողոցը պզտիկ սենեակի մը մէջ ուր հագիւ շարժիլ հնարաւոր էր. իր կեանքը կը մատնէր իր գրամական տագնապը: Եօթ օր Բարիզ միկնոյն տունը անցուցի. հրճուանք մըն էր տեսնել թէ նրթական անձկութիւնը չէր ընկճած Չօպանեանի կորովը: Պոլսէն մեկնած էի այն վստահութեամբ թէ Երոպա պիտի տեսնեմ ծանրախոհ եւ եռանդուն հայութիւն մը. յուսախաբութիւնս նոյն իսկ Մարսէլը սկսաւ եւ գազաթնակէտին հասաւ Բարիզ: Երոպաքնակ հայոց մեծամասնութիւնը հոգեկան լքումի մէջ էր. ԳՏի զեպքերը խորապէս ազդեր էին անոր ուղեղին վրայ. Չօպանեան այն սակաւաթիւ հայերէն էր որոնք ազգային դժբաղդութեանց մէջ հաւատքնին միշտ կը պահէին ապագային համար: Քրազէտ երիտասարդը սակայն շատ մտածկոտ էր, և ըզզածեալ: Ըմբռնած էր թէ տարապայման ծանր վիճակի մէջ էր հայութիւնը, ու փրկութեան համար ո'չ միայն զօհողութիւններու, ծանրածանր աշխատութեանց պէտք կար, այլ նաև խոհականութեան, հեռատեսութեան, համբերութեան: Ազգային վիճակին ու մեզի նկատմամբ Երոպայի տրամադրութեանց վրայ ընդարձակօրէն խորհեցանք: Չօպանեան կ'անդրադառնար թէ հայկական խնդրին շուրջը Բարիզի մէջ լարուած լուծեան դաւը վերջանալու ժօտ էր, ու շատ չանցած հայկական խնդիրը պիտի յուզուէր նաև Բարիզէն. հայասիրական հոսանք մը ստեղծելու և անոր ուղղութիւն տալու պէտք էր աշխատելուստի եւ մտքին ամբողջ ուժովը, հոգիին բոլոր զօրութեամբ կը փարէր այդ գործին:

Նուպար փաշայի ներկայութիւնը Բարիզ բաղաւորութիւն մը եղաւ Չօպանեանի եւ իր բարիզաքնակ բարեկամներուն համար: Շուարուժի թուական մըն էր 96-97 տարին. քաղաքական աշխարհը Հիմնովին ճանչցող, փորձառու, խոհական մտքի մը խորհուրդներուն պէտք ունէին անոնք որ Թիւրքիոյ հայոց դատը ստանձնելու պարտականութեան մէջ կը գտնուէին. Չօպանեան ալ որ քաղաքական կեանքի մէջ նոր կը մտնէր երիտասարդական թափով, խորին մեծարանքով յարգեց այդ զօրեղ մտքին թելադրութիւնները: Եւ ըսեմ թէ ի նպատակ հայ ազգին օգտուեցաւ ոչ միայն մեծարելի ծերունիին քաղաքական դասերէն, այլ անոր ընդարձակ յարաբերութիւններէն, ու նաև թշուառներու ի նպատակ անոր բարեացակամ տրամադրութիւններէն: Ինչպէս յունիս 16ի հանդէսին կազմակերպութիւնն ալ ցոյց կուտայ, Չօպանեան բազմակողմանի ձեռնարկներով է սր կը հետամտի օգնել իր տառապեայ եղբայրներուն. մինչ իր քաղաքական աշխատութիւնները անոնց ապագային բարուղման կը ծառայեն,

ներկան ալ երբեք իր աչքերէն չհեռանար: Դեռ ժամանակն ալ չէ աւելի ընդարձակօրէն խօսելու այն բոլոր ծառայութեանց մասին զոր այդ երիտասարդը միս միայնակ մատոյց ու կը մատուցանէ շատ մը գոթաղիներու: Եւ որքան ներ կան որոնք կ'անդիտանան թէ որո՞ւ պարտական են ահեղ տառապանքներէ իրենց անսպասելի փրկութիւնը:

Անահիտի հիմնարկութեամբ Չօպանեան ուզեց ուղղակի ներգործել ազգային մտքին վրայ: Այդ հանդէսը միանգամայն տնոր խմբագրին տիտղոս մը կուտար Բարիզի մէջ. եւ ըսեմ նաեւ որ գիրութիւն պիտի ընծայէր ապրելու կը կարծեմ թէ Անահիտի հիմնադիրը գոհ է տան ազդեցութենէն զոր ձեռք բերած է, եւ տիտղոսէն զոր կը վայելէ, բայց ապահով չեմ թէ հանգէսը նիւթապէս ալ լիովին կը փոխարինէ իր աշխատութիւնները: Հայ ժողովուրդը շատ պահանջկոտ է պարբերական հրատարակութիւններու պարունակութեանը ու անոնց կանոնաւորապէս երեւմանը համար, բայց ամէն հայ նոյնքան խտտապահանջ չէ երբ կարգը իր պարտականութիւնը կատարելու կուգայ: Կը փափաքէի որ ամէն հայ մտածեր թէ Անահիտ նիւթապէս բարեյաջող վիճակի մէջ գտնուելովն է որ անոր խմբագիրը պիտի կարենայ հանդարտօրէն աշխատել հայկական դատին:

Կ'անդրադառնամ թէ այս գրութեամբ Չօպանեանի քաղաքական գործունէութիւնը յիշեցնելէ անդին չ'անցայ. բայց մեր այս ժամանակակից դէմքը ամբողջովին նկարագրելու համար պէտք էր ուսումնասիրել զբարեւոր, աշխատութիւն մը որ կրնանք ուրիշ ժամանակի թողուլ: Երբ բանաստեղծ հրապարակագիրը իր տարիքը դեռ քրտանով կը համարէ, առջեւնիս շատ ժամանակ ունինք զինքը ուսումնասիրելու:

Անահիտ և իր խմբագիրը քաղաքական ո՞ր և է կուտակցութեան շին պատկանի. բայց՝ եթէ կրնանք այսպէս ըսել՝ հոգեկան հաղորակցութեան մէջ են ազգին ստուար մեծամասնութեան հետ: Թիւրքիոյ հայերս 1895-96էն ի վեր է որ հետզհետէ ինքզինքնիս ժողովելու վրայ ենք: Երբեմնի եռանդին յաջորդած տեսակ մը լքումը անցողական դժբաղդութիւն մը եղաւ միայն. հիմակ աւելի ինքնամփոփ մտքով կ'աշխատինք մեր ապագային համար: Գաղափարային միութեան մը հիմնարկութեամբն է որ պիտի կարենանք այդ ապագային վրայ աւելի վստահօրէն յայտնել: Գաղափարային միարանութիւնը բաւական յառաջացած է, առանց պաշտօնական ձեւակերպութեանց պէտքին, պարզապէս՝ իրականութեան ըմբռնումովը: Չօպանեան իր հրատարակութիւններովը եւ Բարիզի մէջ իր քաղաքական գործունէութեամբը մեծապէս կը նպաստէ ընդհանուր համաձայնութեան խորհուրդներուն իրականացման:

Ինչպէս ուրիշ առիթներով ալ ըսած ենք, և դեռ պիտի բացատրենք, Ֆրանսայի վրայ յուսադիր մնալու պատճառներ ունինք, և ազգովին պէտք է գոհ ըլլանք որ Բարիզ Չօպանեանի պէս կարող երիտասարդ մը ունինք: Հայկական խնդրին ծագման թուականէն ի վեր

Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ միշտ գտնուած է Հայոց խումբ մը որ ազգային գատին յաջողութեանը համար ո՞ր եւ է աշխատութիւն չէ խնայած: Այդ խումբը ամէն ատեն միեւնոյն անձերէն չէ բաղկացած. մահը, տեղափոխութիւնը, նորեկները հետզհետէ զայն փոփոխութեան ենթարկած են, բայց խմբը անփոփոխ մնացած է. եւ իբր մարմին պաշտօնապէս գոյութիւն ունի, իրեն նախագահ ունենալով Պ. Իսկէնտէր, որ քաղաքական բոլոր աւանգութեանց պահապանն է, եւ Ֆրանսայի բարձր շրջանակներու մէջ մեծ յարգանք գտած է, ու հայկական դատին առաջին ներկայացուցիչն է: Չօպանեան՝ շատ երիտասարդ եւ օքանչելապէս գործունեայ, զօրեղ աջակից մը եղաւ նաև այդ խումբին ալ: Ուստի ներելի է մեզ կը կընկալուութիւններ ունենալ այդ « Հայրենասիրական Միութեան » որուն գաղափարները համերաշխութեան մէջ են ազգային ընդհանուր ձգտումին հետ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Չինաստանի խնդիրը պաշտօնապէս բացուեցաւ, անոր զանազան երևոյթներուն ուշապիր պէտք է հետևինք: Մեր Արևելքի ապագային հետ սերտ առնչութիւն ունի Թայրագոյն-Արևելքի հարցին ապագան:

Առ այժմ տակաւին պատերազմական գործողութեանց սկզբնաւորութիւնն է, եւ կացութիւնը դեռ եղական շահեկանութիւն մը չունի մեզի համար. սակայն հեռու չէ որը որ տենդոտ անհամբերութեամբ պիտի սպասենք չինական լուրերուն: Ութ մեծ պետութիւններ տարբեր տարբեր տեսութիւններով, տարբեր տարբեր շահերով իրարու դէմ են, կամ իրարու քով են անհուն կայսրութեան մը կեդրոնը: Անգլիա, Ռուսիա, Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա, Աւստրիա, Ճաբոն, Միացեալ-Նահանգներ, ամէնքն ալ Բէքին ժամադիր եղած են:

Եւրոպայի և Ամերիկայի մէջ մտքերը վրդովեալ են, բայց չկարծուիր թէ պետութիւնները կոուի բռնուին. միայն թէ ծանրազանդազ պիտի յառաջանան, վերին ատիճանի զգուշաւորութեամբ և շրջահայեցութեամբ: Թայրագոյն-Արևելքի խնդիրը նոր հարց մըն է բաղդատմամբ թրքա-արևելեան խնդրին: Հո՞ս իւրաքանչիւր պետութիւն ընտելացած է ամէն զժուարութեանց. դարէ մը ի վեր միշտ կը շափեն կը կտրեն, կը ցննեն կը գննեն, կը հաշուեն կը կշռեն, որոշ տեսութիւններ ունին և միշտ կը ջանան համաձայնեցնել իրենց շահերուն պահանջումները: Բայց անդին ամէն բան նոր է, չինական խնդիրը դեռ երէկուան հարցը կրնայ սեպուել. հոն դիւանագիտութիւնը որոշ գաղափարներով ծրագիրներ չունի:

Բայց ինչպէս մեր կողմերը նոյն և անդին ալ նախ եւ առաջ ուսական ու անգլիական շահերն են որ իրարու կ'ընդդիմահարին. և այս երկու կեցրոններուն շուրջը պիտի համախմբուին միւս պետութիւնները: Ճարպիկ դիւանագիտութիւնն է յաջողութեան երաշխաւորութիւնը: Ու վկայի մը ազդած հետաքրքրութեամբն է որ պիտի դիտենք Ծայրագոյն Արևելքի խնդրին հանգուցները:

Անգլիոյ մէջ զեռ մամուլը որոշ դիրք մը չէ բռնած, ու կը վախճուի թէ հասարակաց կարծիքի բաժանում մը գուցէ կ'ունենայ, ուսական ազգեցութեամբ: Սքանտաւրտ պահպանողական ծանրակշիռ թերթը իր վախճուի կը յայտնէ:

Սքանտաւրտ կ'ընդունի թէ Չինաստան պատերազմող միջազգային բանակին կէսը ուսերը կը կազմեն, հետեւաբար ոչ ոք ձարին սպաննուին և զօրքերուն պիտի զանայ շնորհապարտութիւն այն ծառայութեանց համար զօր մարդկութեան կը մատուցանեն: Սակայն կը ցաւի որ անգլիական ինչ ինչ շրջանակներու մէջ ուսասիրական փաստարանութեան մը ջանքերը երևան կուզան, « ճիշդ ինչպէս զժրաղգարար յայտնուած էին միջազգային նախընթաց տագնապներու միջոցին: » Այդ ուսասէրները կը թեւադրեն թէ՛ որովհետև Անգլիա հիմակ շտտ զբաղած է Հարաւային Ափրիկէի մէջ, պէտք է որ ձեռնթափ ըլլայ Հիւսիսային Չինաստանի մէջ պատերազմական գործողութեանց մասնակցելէ: Այս թելադրութիւնը եթէ ընդունուի այն ատեն Ռուսիոյ ձեռքերը պէտք է ազատ թողու. ու ետքն ալ ինքն է որ իբր փրկիչ իրաւունք պիտի ունենայ լիուլի ստանալ ինչ որ կուզէ:

Անգլիական թերթը և անոր հետ Անգլիոյ ստուար մեծամասնութիւնը կ'ըմբոստանան այսպիսի առաջարկներու իրականացման գաղափարին դէմ: « Նոյն իսկ եթէ մենք անկարող ըլլայինք, կը գոչէ Սքանտաւրտ, ու մեր տկարութեան հետևանքներուն յանձնառու, բայց և այն պէս ճամբան Ռուսիոյ առջևը բաց պիտի չձգուէր: Ճաբոն որ Բէնջիլի մէջ արդէն մեծկակ ուժ մը ունի, պէտք եղած պատրաստութիւնները տեսնելու վրայ է որպէս զի 1875 Յ 30 հազար զինուորի բանակ մըն ալ ձեռքի տակ ունենայ, ի հարկին ուր որ պէտք է գործածելու համար: Ամերիկեան կառավարութիւնն ալ բացարձակօրէն յայտնած է թէ թոյլ պիտի չի տայ որ մէկ Պետութիւն մը իրեն մասնաւոր շահեր հանէ հասարակաց համաձայնութենէն դուրս: » Հիմակուհի մա պատերազմի դաշտին վերայ ուսական զինուորները բազմաթիւ են, բայց քիչ ատենէն համեմատութիւնը պիտի փոխուի, միւս պետութեանց զօրքերուն ժամանումովը: « Բայց եթէ Անգլիա միւս միևնաչափ ալ մնայ պիտի կարենանք Չինաստանի մէջ մեր պահանջները և մեր շահերը պաշտպանել » կը յատարարէ կառավարական թերթը: Բայց այդ վախճու չի կայ, վասն զի եթէ ուրիշ ոչ ոք աջակցի Անգլիոյ, Ճաբոն արդէն կազմ և պատրաստ է ընդդիմադրել Ռուսիոյ, « Ու Ռուսիա պիտի չհամարձակի, կ'ըսէ Մօրնիեն' Բօսք

կուրի բռնուիլ Ճաբոնի հետ երբ անոր կանակը Արևմտեան պետութիւն մը կայ: »

Չինական խնդրին տագնապը սկսած պահուն յանկարծ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը, Կոմս Մուրավիէֆ մեռաւ, յունիս Չի առտուն, ինչպէս իր նախորդը իշխան Լօպանոֆ յանկարծամահ եղած էր արևելեան խնդրին տագնապի պահուն: Բայց Մուրավիէֆի անհետացումը ո՛ր և է ազգեցութիւն պիտի չունենայ Ռուսիոյ արտաքին քաղաքականութեանը վրայ. ամբողջ Եւրոպական մամուլը միաբան է այս համոզումին մէջ: Տէյլի թեյէկրաֆին Բեկրպուրկէն կը հազարգին թէ Մուրավիէֆ Կոմսը իբր արտաքին գործերու նախարար արդէն մեծ դեր մը չէր կատարեր: Նախարարութեան իրական տիրուրտանքը էին Կոմս Լամտորֆ, Մուրավիէֆի խորհրդականը, և իշխան Օպօլէնսքի: Մուրավիէֆ ուրիշ բան մը չէր ընէր բայց եթէ կայսեր ներկայացնել տեղեկութիւններ և ծրագիրներ որոնց հեղինակը ինքը չէր: Այս պատճառաւ կարելի է ընդունիլ թէ ուսական քաղաքականութեան մէջ ո՛ր և է փոփոխութիւն պիտի չտեսնուի, որքան ատեն որ արտաքին գործերու պաշտօնատան զուխը միեւնոյն մարդիկը կը գտնուին: » Ու Կոմս Լամտորֆն ալ արդէն արտաքին գործերու առժամեայ նախարար անուանուցաւ:

### ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ԲՈԼՈՐԸ

#### Կ. ՊՈԼԻՍ յունիս 26

Ահա ամիս մըն է որ Օրմանեան պատրիարք վերագարձաւ իր պաշտօնին զուխը, և տակաւին « յարաբերական » կոչուած խնդիրներուն մէջ ո՛ր և է փոփոխութեան նշան մը չտեսնուիր: Այն քանի մը կարևոր եւ ստիպողական գործերը որոնք պատրիարքական հրաժարականին շարժառիթը կը կազմէին բնաւ լուծում մը չստացան: Յետաձեռն տուրքերու խնդիրը յանգեցաւ այնպիսի կտրգազրութեան մը որ պարզապէս հեգնութիւն կրնայ համարուիլ: Ժողովուրդին « շնորհուցեալ » այդ տուրքերուն մէկ տարուանը, ճիշդ այն որ գրեթէ ամբողջապէս արդէն գանձուած է: Իսկ միւս երկու տարիներու պարտքը պիտի գանձուի յառաջիկայ երկու տարուան մէջ, այսինքն՝ երկու տարի հայ ժողովուրդը կրկնակի գումար մը վճարելու պիտի պարտաւորուի. և սակայն այդ թշուառ ժողովուրդը որ հաց կ'աղաղակէ, ո՞տկից պիտի գանձէ նոր տուրքին ստակը որպէս զի ի հաշիւ հինին ալ վճարում մը կարենայ ընել: Ի՞նչպէս Օրմանեան պատրիարք այս նկատողութիւնը կարող չեղաւ ներկայացնել:

Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրն ալ ո՛ր և է բարեփոխութիւն չէ կրած: Դուրը կը « շնորհէ » որ ընտրական գործողութեան նախագահէ կաթողիկոսական տե-

ղապահը, բայց կը պահանջէ որ ընտրելիներու ցուցակը նախապէս իրեն հաղորդուի, հարկ եղած սրբագրութիւնները ընէ և այնուհետեւ քուէարկութիւնը կատարուի: Թե՛ եկեղեցականները և թե՛ ժողովուրդը բնաւ չեն ուզեր որ տեղի տրուի այս պահանջումին առջև, պահանջում մը որուն իրականացումը պիտի ջնջէ ազգին ամբողջ իրաւունքները, և ասիկէ ետքը հայ եկեղեցականութիւնը պիտի ստրկացնէ Դրան: Բայց Օրմանեան պատրիարք իր «բոլոր տաղանդովը եւ վարպետութեամբը» — յատկութիւններ որոնց ապացոյցները շտապեց ազգը խաբելով խաբխաբելով և Դրան հաճոյակատար հանդիսանալով չորս տարի պաշտօնը շարունակելու մէջ — Օրմանեան տակաւին կարող չեղաւ կառավարութիւնը ետ կեցնել իր պահանջումէն: Ընդհակառակը շատ հակամէտ է զիջումի, որպէս զի իր պաշտօնավարութիւնը դժուարացնող էն մեծ խնդիրներէն մին վերնայ, ինչպէս վերցուց Ալէքսանդրի Կաթողիկոսական, իզմիրլեանի առաջնորդական ընտրութեանց խնդիրները: Կրօնական ժողովը սակայն պատրիարքին զէմ խոչընդոտ կը կանգնի, հակառակ այն ազդեցութեան զոր Տատեան Արթին փաշա Երջտըզէն ուղղակի բանեցնել կուտայ ընդդիմադիր եկեղեցականներուն վրայ: Կրօնական ժողովը այս ծանր կացութեան մէջ, տեսնելով որ պատրիարքը փոխանակ իրենց միանալով ազգին իրաւունքները պաշտպանելու, կը համաձայնի Արթին փաշայի հետ, տեսնելով նաև որ Դրան ճնշումները շատ ծանր են: այլ ևս կուզէ հրաժարիլ, մանաւանդ որ իր սահմանադրական պաշտօնավարութեան շրջանը շատոնց է լրացած է: Եկեղեցական ժողովականները կը խորհին որ իրենց յաջորդները թերեւս ճամբայ մը զբռնեն այս անել կացութեան: Բայց կրնան հրաժարիլ: Նոր ընտրութեան համար հարկ է Ազգային Ժողով գումարելու սուլթանը Ազգային Ժողով գումարելու թողտուութիւն ընէ: Եւ յետոյ, եթէ Կրօնական Ժողովը հրաժարի հարկ պիտի ըլլայ որ Քաղաքական ալ իրեն հետևի. երկու մարմինները միասին ընտրուած են, միասին կը վերջացնեն իրենց շրջանը: Հրաժարիլ բառը սոսկում կը պատճառէ Տատեանի: Այս մարդը որ տարիներէ հետէ մզլուած կը նստէր տունը, զրամական սոսկալի նեղ կացութեան մէջ, ահա երեք տարիէն աւելի է շտապ, հանգըտաւէտ կեանքով կ'ապրի: Արտաքին գործերու խորհրդակցանի անուանական պաշտօնին ամսականները ամէն ամիս իրեն կանխիկ կը վճարուի. Երջտըզէն ալ ոչ միայն կանոնաւոր ամսական մը կը ստանայ այլ և առատ պարգևներ. Թողունք այն խառնները զոր կ'ընէ իր միջոցաւ Երոպա զրկուած գրառներուն մէջէն: Օր մըն է իրեն բացուած է, ու անշուշտ գոցել չուզեր: Ոչ ոք կը յիշէ սուլթան Ազդիի գահընկեցութենէն ի վեր Տատեան փաշա այսպիսի լայն վիճակի մը մէջ ապրած ըլլայ:

Ինչ խօսիմ ուրիշ խնդիրներու վրայ, մասնաւորապէս վճանէն եկած լուրերը շատ սրտաճմլիկ են: Շատ հայեր ինչ որ ունին կը ծախեն այլուր գաղթելու համար, այս

պիտի պարագաներու մէջ «վաճառում» բառը կը նշանակէ ձրի տալ:

Երթեւեկութիւնները այնքան խիտ պայմաններու ենթարկուած են որքան առաջ: Ու երբ պատրիարքին զիտողութիւն կ'ըլլայ թէ ինչու գործերը ամուրը չկապած հրաժարականը ետ առաւ. — Ինչ ընեմ, կը պատասխանէ, կը վախճամ որ Դրան բարկութիւնը կը զրգոծմ ազգին զէմ:

Այս արդարացումով ամբողջ ազգը կրնայ վաճառել: «Աւելի աղէկ չէ՞ վաճառուիլ քան թէ Տիրոջ բարկութեան զոհ երթալ» ըսելով:

ՕՐԱԳՐՈՂԻ ՅԻՇՈՒՄՆԵՐ

Թիւրքիոյ վարչական արդի գրութեան վրայ այս էջերուն մէջ խօսուած ատեն, պատմական տեղեկութիւններով միանգամայն ցոյց կը տրուի թէ հիմակուան սուլթան զար առաջուան կացութեանց միջեւ տարբերութիւնը շատ զգալի չէ: Այժմ սակայն նորութիւնը հոն է որ կառավարական մարմին իւրաքանչիւր անգամը միշտ արթուն հոգեբան ըլլալու հարկին մէջ է: Ամէն մէկ պաշտօնէի, պատիկէն մինչեւ էն մեծը, մտատանջութիւնը այն է թէ ի՞նչ պիտի ըսէ սուլթանը իր ո՛ր և է մէկ շնչին գործին համար իսկ, եթէ ականջը հասնի: Թիւրքիոյ պաշտօնեաները քառորդ զար մըն է որ նախազգացման եւ գուշակութեան կարողութիւններին օրէ օր կը զօրացնեն: Ու ահա ամէնուն աչքը Երջտըզ յառած ըլլալով, միօրինակ ուղղութիւն մը կը տիրապետէ ամբողջ վարչական մարմինն մէջ: Պոլսոյ էն ոչինչ քեթիպն ու սատրապաժը, նահանգի մը կուտակալը և զապթիէն մտածութեան միօրինակ եղանակաւ կը զարծեն: Հոտառութեան զգացումը այնքան զօրացած է որ ընդհանուր վարչութեան մէջ սուլթանին զբժգոհութիւն պատճառող զէպքեր զրեթէ չեն պատահած, բաց ի այն պարագաներէն ուր կառավարիչ մը ուզած է Հայոց հետ ծայրայեղ խստութեամբ չվարուիլ, կամ սատրապաժ մը երկիրը քիչ մը բարւոյցելու մտածութիւնը ունեցած է: Ասոնց պատիժը անմիջապէս անօրինուեր է: Իսկ երբ կը ներկայանայ խնդիր մը որուն համար սուլթանին կամքը գուշակելու վարանսով մէջ կը գտնուին պաշտօնեաները, կամ թէ հրամանը ստանալու դժուարութիւն կը տեսնեն, այն ատեն ձեռնպահութիւնը զերագոյն իմաստութիւն կը համարին: Ուստի և թիւրք վարչութեան մէջ թէ ամենագորեղ կեդրոնացում, թէ ամենաթույլ անխխնականութիւն կը տիրէ. ու ժողովրդին բոլոր զասկարգերը ահեղապէս կը տառապին այդ երկու ծայրայեղ գրութիւններէն որոնք միանալով բռնապետութիւնը կը մարմնացնեն:

Այն անոնք որ թիրաքիոյ մէջ ժօտէն կամ հետուէն գործ մը ունեցած են կառավարութեան հետ շուտով կ'ըմբռնեն այս ճշմարտութիւնը: Պոլիս օրագրողի վերջին քանի մը ստորուան պարագումս բաւական դաւ ինծի, հետուէն իսկ զիտելով, ճանչնալ թրքական վարչութիւնը: Եթէ բարեկամներս կամ ես օր մը առիթ ունենանք ընդարձակօրէն կրել Հայրենիքի շորս ու կէս տարուան կեանքը, որուն կարևոր մէկ մասը զադարուժով անցաւ, հայ ժողովուրդը այն ատեն գաղափար մը պիտի ունենայ այն տառապանքներու, տանջանքներու, մահացումներու շրջանին վրայ ուր ապրեցանք: Այդ դժնդակ օրերուն մէջ մեզի բռնող, ապրեցնող ուժը բարոյական այն անհուն գոհունակութիւնն էր զոր կը զղայինք տեսնելով ազգը Հայրենիքի խուճիկն գաղափարներուն եւ զգացմանց բացարձակ ազդեցութեան ներքեւ, հայ աշխարհին մէկ ծայրէն միւս ծայրը, ու ամէն ուրեք ուր հայը ցրուած է: Օրագրողի յիշատակներէս հատ մը, շատ պզտիկ մը, կը հրատարակեմ այսօր, ազգարարելով սակայն թէ «Ժամանց» մը չէ.— թէ և «ժամանց»ն ալ իրականութիւնը կը ցոլացնէ, փոքր ինչ պնդազարգութեամբ, ինչպէս որ «արուեստն ալ բնութիւնը կը սրբագրէ միայն, և ոչ թէ կը ստեղծէ:»

Վերջերս զիշեր մը օրացոյցը կը թղթատէի: Այդ պըզտիկ տետրը հայրենի մասունք մըն է որ, մանաւանդ հայազուրկ քաղքի մը մէջ, մեզի սրտով ու մտքով մեր հայրերուն հետ կ'ապրեցնէ, ու օրուան հայերս իրարու կենակից կ'ընէ հոգեկան կեանքի յիշողութիւններով: Աչքիս զարկաւ յունիս 10 23 թուականը որուն առջև արձանագրուած է «ՇԲ. Սրբոյ հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչին երնի վիրապէն». տարտամ յիշողութիւն մը միտքս բերաւ թէ ատանկ օր մըն էր որ հայ ազգը առաջին անգամ ըլլալով իր պատարագին մէջ հռչակեց 19րդ դարու Լուսաւորչին իր նախահօր յաջորդութեան ցնծաբեր աւետիսը: Շատ վշտեր փարատեցան այդ օրը հայ սրտէն, որ թեթեւեամբ զգաց ինքզինքը երբ զիտցաւ թէ իր Հայրիկը Երուսաղէմի զընտանէն պիտի ազատի:

Ընտրութեան թուականէն յետոյ ամէն օր Պոլիս տարօրինակ անձկութեան մէջ կը գտնուէինք: Սուլթան Համիտ ձարը իր տրամադրութեան ներքեւ պիտի ունենար թէ ոչ: Բայց 1893ի գարնան յուսալիբ լուրեր սկսան հասնիլ Բեդրպուրիէն, եւ երբ Պուլկարիս նախարարապետը Պոլիս գալով սուլթանին հետ միաբանիլ ուզեց, այլ ևս Հայրիկի կաթողիկոսացման վաւերացումը ապահով երեցաւ: Օրագրութիւնը սակայն ինչ պիտի ընէր: Բեկրանքի լուրը ժողովրդին հաղորդել պիտի ներուէր: Հայրենիքի տնօրէնը առանց ազմուկի գնաց տպագրական տեսուչին, եւ թոյլտուութիւն խնդրեց կաթողիկոսական վաւերացումին լուրը հասնելուն զայն հրատարակել, առանց սպասելու դրաքննիչին: Հայրենիք կէս զիշերէն ետքը սպուելուն պատճառաւ զրաքննիչը գտնել կարելի չէ այդ ժամուն. ու այդպիսի լուր մըն ալ յետաձգել ներելի չէր: Տեսուչը կաթողիկոսական խնդիր մը իրաւամբ զուտ

կրօնական գործ մը նկատելով խնդրուած հաւանութիւնը տուաւ: Խմբագրութեան մէջ իբր մեծ գաղտնիք մը պահուեցաւ այս արտօնութիւնը: Քանի մը օր ետքը Հայրենիքի լրագրող իրիկունը Պատրիարքարանէն վերագտնալուն հաղորդեց թէ՛ ուսական զեսպանատան թարգման Յարթիկ Նէվրուզեան, նոյն օրը Աչքեան պատրիարքին հետ տեսակցութիւն մը ունենալէ յետոյ, այս վերջինս մտախալապատ, մթագին զէմքով երեցեր է: Գուշակեցինք թէ կաթողիկոսական վաւերացման լուրն է որ հաղորդուեր է: Ու Աչքեան բեկանումին կը սպասէր իբր ժառանգորդ: Անմիջապէս բարեկամէ մը, որ Պէտիւքտէրէ կը բնակէր, խնդրեցինք ո՛ր և է միջոցաւ մը իրողութիւնը ուսական զեսպանատունէն ճշտել և զիշերը հեռագրել մեզի: Հայրենիքի զիշերապահը ես էի, ժամերով սպասեցի. աւաթօրքա Տիկն երբ հեռագրատան ցրուիչը եկաւ, տակն ու վրայ եղած բացի հեռագիրը. գուշակութիւննիս կ'իրականանար: Հարկ եղաւ սակայն այս լուրը պարզօրէն խմբագրել, իբր թէ տարապայման կարևորութիւն չէինք ընծայեր անոր. կը կարծեմ թէ վերնագիր իսկ չգրի: Ատուն Պոլիս յուզումի մէջ էր. լրագրավաճառները կը վազէին Հայրենիքի խմբագրատունը. մեքենան զուլ ու դադար չունէր, կ'արտադրէր ու կ'արտադրէր:

Գրաքննիչը այս ամէնէն տեղեկութիւն չունենալով կէս օրին ժօտ Արևելքին կ'երթայ— մեզի իրիկունը կուգար: Հին լուրերու շարքը կաթողիկոսական լուրը տեսնելով հրատարակութիւնը առժամապէս կ'արդիւլէ, Դրոնէն հրահանգ ստանալու համար: Եւ ահա Հայրենիքը ցոյց կը տրուի իրեն: Խեղճ պաշտօնեան գունամափ մեր վրայ վազեց. սակայն թերթին տնօրէնը զինքը հանդարտեցուց եղելութիւնը պատմելով: Շնորհիւ Հայրենիքի նախահոգութեան, Հայրիկի վերջնապէս կաթողիկոսացման լուրը թիրաքիոյ հայ օրագրութեան մէկ անկիւնը արձանագրուեցաւ:

Կարգը եկաւ Պատարագի մէջ նորընտիր կաթողիկոսին անուան յիշատակութեան: Խստան Ժողովին որոշմամբ Պատրիարքը Պոլսոյ եկեղեցիները շրջաբերական մը կը զրկէ, պատուիրելով որ յառաջիկայ կիրակի օրէն Մկրտիչ կաթողիկոսի անունը յիշատակուի: Այս տեղեկութիւնը առտուան մը լուրն էր, ու առաջ Արևելք պիտի հրատարակէր զայն: Գրաքննիչը նկատելով որ պարզապէս կրօնական ձեւակերպութեան մը լուրն էր, ու Պատրիարքարանին մէկ որոշումը, ո՛ր և է արգելք չյարուցանէր: Մեկնելու րոպէին սակայն խմբագիրներուն զէմքը զիտելով վարանում մը կը զգայ, և տուած թոյլտուութիւնը ետ կ'առնէ, պայմանաւ որ Դրոնէն անմիջապէս հրահանգ պիտի ստանայ և հաղորդէ: Մի ևնոյն արգելքը միանգամայն ճերիտէին ալ կը զրուի:

Այցելու գրաքննիչը Դուռը շիտակ իր աւագ պաշտօնակցին կ'երթայ, Յակոբ էֆէնտիին, որ բազմամեայ պաշտօնատար մըն էր, շատ ծեր, և ազդեցիկ: Յակոբ էֆէնտին որ թրիմեանին ալ պաշտօնըն էր, եղելութիւնը իմանալով կ'ըսէ,

— Տէր ողորմեա՛ ինձ Աստուած: Ինչո՞ւ այդ լուրը վար զրեբ ես. կրօնական գործ մըն է, վաղը բոլոր եկեղեցիներուն մէջ պատրիարքական հրամանը պիտի գործադրուի, հայ պիտի չմնայ որ չըլտէ: Ատիկա արգելելու բան է:

— Շատ աղէկ, կը պատասխանէ երիտասարդ գրաքննիչը, շուտ մը հրահանգ զրկեմ որ հրատարակեն:

Բայց ահա մտածականը կ'առնէ Յակոբ Էֆէնտին. ֆէսը վեր կը նետէ, կը սկսի ճակատը շփել, ու վրայ կը բերէ,

— Հելէ քիչ մը կեցիր. մէյ մը Պառնաս Էֆէնտին ալ հարցնենք:

Պառնաս Էֆէնտի հայ մամուլին վերին տեսուչն է: Իր մէն խնդրուած խորհուրդին այն պատասխանը կուտայ ինչ որ Յակոբ Էֆէնտի տուած էր իր կրտսեր պաշտօնակցին: Բայց ինքն ալ վարանում մը կը զգայ,

— Հելէ քիչ մը կեցիր. երթամ Հրֆզը պէյին հարցնեմ, կ'ըսէ:

Հրֆզը պէյ տպագրական ընդհանուր տնօրէնին երկրորդն է, թիւրք թերթերուն գրաքննիչը. ու ինքն է որ տմէն օր նախ և առաջ տեղեկութիւն կը ստանայ քրիստոնեայ մամուլին օրուան հրատարակութեանց: Այս պաշտօնեան ալ կը պատասխանէ թէ «կրօնական գործ մըն է, Պատրիարքարանին որոշումն է, բոլոր եկեղեցիներուն մէջ պիտի լսուի, ուստի այդ լուրին հրատարակութիւնը ո՛ր և է անպատեհութիւն չունի»: Եւ սակայն քանի մը ըսպէ մտածելէն ետքը, անգամ մը Պէհնէթ պէյին ալ հարցնելու հարկ կը տեսնէ: Պէհնէթ պէյ տպագրական ընդհանուր տեսուչն է: Առանց վարանելու կը յայտարարէ Հրֆզը պէյին թէ՛ «այդպիսի զուտ կրօնական լուրի մը հրատարակութիւնը արգելելու պատճառ չի կայ»: Բայց և այնպէս անօգուտ չհամարիր անգամ մը Միւթէշար պէյին դիմել:

«Միւթէշար պէյ»ը, ներքին գործերու խորհրդական էր, Բէֆիզ պէյ. Կ. Պոլսոյ մամուլին վերին հսկողութիւնը ուղղակի Տախիլիէ Միւթէշարին իրաւասութեան կը պատկանի: Բէֆիզ պէյն ալ արգելքի մը պատճառ չտեսներ, առկայն անգամ մը Ներքին Գործերու նախարարին կամ քը գիտնալը օգտակար կը համարի: Պաշտօնեայ մը կը զրկուի փաշային, հարկ եղած հրամանը ստանալու համար: Հիմակուան սատրագամը, խալիլ Բիֆաթ փաշա, ան ատեն Ներքին գործերու նախարար էր: Ան ալ քիչ մը մտածելէ յետոյ, կ'ըսէ թէ՛

— Ատիկա կրօնական խնդիր մըն է, ուստի Դատական և կրօնական գործոց նախարարին իրաւասութեան կը պատկանի, անկէ հրաման ուզելու է:

Պաշտօնեան կ'անցնի գատական նախարար Բիզա փաշային, որ աղէկ մը մտիկ ընելէ յետոյ կը յայտարարէ թէ՛ ինք ուղղակի Պատրիարքարանին հետ եղած յարաբերական գործերուն կը խառնուի, և ոչ թէ Պատրիարքարանին եւ լրագրութեան միջև եղած գործերուն: Ոստիկանութեան գիտնալու բանն է թէ՛ այդ օրինակ լուրի մը հը-

րատարակութիւնը անպատեհութիւն մը ունի՞ կամ ոչ:»

Հարկ կ'ըլայ ուրեմն երթալ շիտակ Նազըմ պէյին, որ կը պատասխանէ.

— Շիտակը ըսելով այդ խնդրին չեմ կրնար խառնուիլ: Այդ լուրին հետեանքներն են որ կրնան միջամտութեան իրաւունք մը տալ ինձի: Եթէ առանց անպատեհութեան անցնի այդ լուրը, ըսելիք մը չունիմ. բայց եթէ ատոր պատճառաւ ո՛ր և է խառնակութիւն յառաջ գայ, ես իբր ոստիկանութեան նախարար ան ատենը կը գործեմ: Ընդհանուր քաղաքականութեան վերաբերող գործ մը ըլլալուն հարկ է սատրագամէն հրաման ստանալ:

Ինչ ընել, Պաշտօնեան կ'անցնի Սատարէթ: Սատարագամը ճէվատ փաշան էր, զինուորական մը: Սարուս փիլի կերպով կը բարկանայ որ այսպիսի խնդիր մը իրեն կը ներկայացնեն.

— Ես լրագիրներուն վերակացուն եմ, կորսուէ սըտեղէն, կը պտայ խեղճ մարդուն երեսին:

Ան ալ լոկի մնչիկ տեղը կը դառնայ:

Թէ՛ ահա ինչպէս ժամանակին թերթերուն մէջ բնաւ հետք մը չգտնուիր պատարագի մէջ նորընտիր Կաթողիկոս Մկրտիչ Աի անուան յիշատակութեան համար Պատրիարքարանէն զրկուած շրջաբերականին: Ոչ ոք արգելեց այդ տեղեկութեան հրատարակութիւնը, բայց ոչ ոք ալ արտօնեց, վասն զի ոչ ոք կրցաւ գուշակել թէ Երլազը ինչ կրնայ մտածել այդ մասին: Առաջին անգամ այցելու գըրաքննիչը տարակոյսի ենթարկուելով վախը արագաբար փոխանցուեցաւ մինչև սատրագամը: Ահա հիմակուան թիւրք վարչութիւնը:

Ա. Ա.

### ԼՈՒՐԵՐ

ՆԱՍՈՐԻ ՊԱՏՐԻԱՐԿ. Կ. Պոլսէն յունիս 21 քրախակնով կը հաղորդուի թէ նախորդ Պատրիարք Իզմիր յեան Արքեպիսկոպոսը երկու ամսէ ի վեր քառական ծակը հիշանդոտքեան մէջ է: Անգլիացի բժիշկը Երոսասդիւ Հայոց վանքը երթալով կը խնամէ հիշանդոտքը, որուն յանձնարարած է Երոսասդիւի շրջակաները օգափոխուրեան երթալ: Այս մասին կատարարութեան լուր տրուելով տեղին Բօմիսէրը այցելած է վանք, եղելոտքիներ տոռագած է, բայց տեղափոխութեան արտօնութիւնը չէ տուեր, միևնչէր յունիս 21 Պոլիս հասած լուրերուն համեմատ:

ՔԱՆԴՈՒՄ ՄԸ. Տիարպէքիթի Հագրօ գաշտակիէն մէջ Հայոց Թրոսքը վանքին քովերը յերան մը վրայ հիւնաշտարց քերդ մը կայ որ ըստ աշանդոտքեան մեր Հէրոսը

բագաւորիկն է. հիւսակ Հագրոյի Սեպտիկ փաշան այդ պատուական հնոքիւնը քակել տալով անոր վեմերէն իրեն ապարանք մը կը շինէ: Ոչ Հագրոյի և շրջականերու հայերն են որ պարտաւորուած են այդ ահագին քարերը իրենց կռակը առած լեռներէն վար իջեցնել: Աւելորդ է ըսել թէ այս գրաստական աշխատութիւնը ձրի է, իշրաքանչիւր հայ երկուս օր տարապարհակ աշխատելու հրատան ստացած ըլլալով: Ոչ այս բաշական չէ. Հագրոյի հայերը 12,000 դոնոնչ ալ պիտի պարտաւորուին վճարել:

**ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻ.** Ֆիկոնո Գրական, գեղարուեստական, քաղաքական բարիգեան մեծ քերքք յունիս 23 շարաք օրուան թիւին մեջ մեր Մայր-Արաքսիին ձայնագրութիւնը հրատարակած է, ոտանաւորին առաջին տան ֆրանսերէն քարգմանութեամբ: Թերթին խմբագրութիւնը սքանչացմամբ կը խօսի այդ հայկական իսկապի պանաստեղծութեան վրայ որ յայտնութիւն մը կը համարի, գերագնացօրէն հրատարակել: Երգն ոչ ձայնագրութիւնը արտասպռած են կովկասցի երաժիշտ Պ. Եղիեազարեանի Բարիզ ըրած հրատարակութեան:

**ՄԻՍՅԵԱԼ-ՆՈՂԱՆԳՆԵՐՈՒՆ Կ.** Պոլսոյ գործակատարը յունիս 16ին Դրան ևնր ժանեղագիր մըն ալ տալով անմիջապէս պատասխան ուզեր է այն պահանջումներուն համար զոր ատենէ մը ի վեր ստիպողաբար կ'ընէ, հայկական կոտորածներու ատեն ամերիկեան միւսիսիոնարութեան կրած կորուստին առիւտ: Երբորքը այս ևնր դիմումէն շատ ևնեղացեր է, տեսնելով որ Ամերիկայի կառավարութիւնը անկողորմելի կը մնայ իր որոշումին մէջ:

**ԱՐՇԱԿԱՆՔ. Կ.** Պոլսէն յունիս 30 րուականով անգլիական քերքերուն կը հեռագրուի թէ պարսկական սահմանագլխէն Թիւրքիա արշաւանք մը տեղի ունեցեր է: Պարսկահպատակ Թիւրքիա իսան գիւնեալ քիւրտերու գոշիւր անցած քրքական հողը աւապատակեր է. բայց օսմանեան գօրքերուն հետ ընդհարումի ատեն Թիւրքիա իսան է իր երկուս եղօրորդիները սպաննուէր են: Արշաւանքը ետ մղուած ըլլալու է: Թիւրքիա իսան, կ'ըսէ հեռագիրը, ոռուսական պաշտպանութիւնը կը վայելէր. հետեաբար և այդ արշաւանքը օռուսական դրդումի հետեանք կրնանք ևկատել:

**ԵՐԻՏՐԱՍՏՐԻ ԹԻԻՐՔԵՐԸ** Պոլիս մեծ պետութեանց դեպքաններուն գրութիւն մը յանձնելը են, որուն մէջ կը յայտարարեն թէ այլ եւս ժամանակն է վերջ մը դնել սոչրանի վարչական դրութեան, ռաստի է պետութեանց միջամտութիւնը կը խնդրեն այս ևկատակաւ: Այս դիմումը Պոլիս չիմացուի. լուրը Երոպա հեռագրուելէն յետոյ է որ յունիս 21 հիւզարթի օր ևս սոչրանն ալ կ'իմանայ Լոնտոնի դեպքանտան հեռագրէն: Երբորքը խորին բախճութեան մէջ մտած է, գլխաւորապէս այն պատճառաւ որ հակառակ ոտիկական անեան

մեծ զգոշաւորութեանց, Երիտասարդ Թիւրքերը կարող կ'ըլլան դեպքաններուն հետ յարաբերութիւն հաստատել, ոչ բան մըն ալ չիմացուի Պոլիս. ոչրեմն ալ ինչ վստահութիւն ունենայ լրտեսներուն վրայ: Երիտասարդ Թիւրքերուն կեդրոնը փոխադրուեցաւ Լոնտոն, ոչր կը գտնուի Տաւատ Մահմուտ փաշա, և ոչր հրատարակուեցաւ Օմանլի ևնր թիւր:

**ԹԻՐԿԱԿԱՆ ՆԱԻՍՏՈՐՄԸ** զիւնելու համար Պերլիկե Բրիւս և Լոնտոնի Արմարոնի գործարանները իրարու հետ կը մրցին: Գերմանական տունը թէ 70,000 ոսկի գեղյած է իր ևսիկին պահանջումէն բայց եւ այնպէս տակաւին մեծկակ տարբերութիւն մը կայ երկուս տուններուն կողմէ առաջարկուած գիւններուն միջև: Գերմանականը 678,000 ոսկիով կ'ուզէ հոգալ քրքական ևստորմին քնդակօրները, միւս Արմարոնի 596,000 ոսկիով ևնյն գործը տեսնելու յանձնառու կ'ըլլաւ: Պոլիս անգլիական դեպքանը բնած է Արմարոնի գործարանը, իսկ Բրիւսի համար բանակցութիւնները ոչրդակի Երբորքի և Պերլիկե միջև կը կատարուին: Դրանական ևնուագորդի խնդիրը քաղաքական ազդեցութեան ալ աճորդն է:

**ԿՈՂՈՊՏՈՒՄ.** Թիւրք զիւնուրները Պոլիս վերին Վասիորի մօտերը Պելկրատ գիւղին մէջ կողոպտեր են Գերմանացի գրօսաշրջիկ Բասարտէք սպան: Գերման դեպքանտունը ուժգնապէս քողորքեր է:

**ՀԱՍՑԵ ԵՒ ԲԱԺՆԵԳԻՆ**

**ՆՈՐ ԿԵԱՆՔԸ** կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 15 ին: Բաժնեգիրն է Երոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար:

**ՆՈՐ ԿԵԱՆՔԻ** վերաբերեալ նամակ ու բաժնեգիր շրկել առ՝

L. FRANK,  
27, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.